№ 233 ՀԻՆԳՇԱԲԹԻ, 22 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ
1909
ԵՐԵՍՈՒՆԵՕԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ
ՀԻՆԳՇԱԲԹԻ, 22 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ № 233

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ» Сергіевская ул., № 5.
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Խմբագրատան տէլէֆօն № 253.

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից).
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզւով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տպարանի տէլէֆօն № 228.

ՄՇԱԿ
(37-ՐԴ ՏԱՐԻ)
Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ».
TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

Նոյեմբերի 1-ից մինչեւ տարւայ վերջը 2 րուբլի:
Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն և 40 կ. նամականիշ:

Կովկասից դուրս գտնվող անձերի և հիմնարկութիւնների յայտարարութիւնները բացառապէս ընդունվում են՝ Մոսկվայում—Центральная Контора Объявленій Торговъ. Дома Л. и Э. Метцль и К-о, Мясницкая, д. Сытова, և նրա բաժանմունքներում—Պետերբուրգում՝ Морская, 11, Վարշավայում՝ Маршальковская, 130, Պարիզում՝ 8 Площадь Биржи.

Նկարիչ ուսուցիչների ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ

Որոնք կարող են հայոց դպրոցների համար ձեռք բերել նկարչութեան համար գիպսի տարրեր, որոնց մէջ կան շատ հազւագիւտ և օգտակար բաներ, այն է՝ բնականից ձուլված՝ սեխ, խաղող, տանձ, խնձոր, սերկևիլ, նուռը, բադրիջան, պամիդոր, կաղամբ, ոտ, ձեռք, շան գլուխ, մեծ ականջ, նաև հինգ տեսակ օրնամենտներ սկսնակ երեխաների համար: Գները մինչև հոկտեմբերի վերջը շատ էժան են:

Կարելի է տեսնել ամեն օր ժամը 1—5-ը, քանդակագործ Միքայէլեանի ստուդիօյում, որը գտնվում է ֆունիկուլեօրի սարին կայարանի կողքին դէպի աջ՝ վերջին տունը (Բեգերուտարնայա, 2, սեփ. տ.): (տւ.) 1106. 1—1

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՈՒՆ
ԶՈՒԲԱԼՕՎԻ ԱՆՈՒԱՆ
ԺՈՂՈՎՐԴ. ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ. ԿԱԶՄԱԿԵՐՊ.
Հայկական սեկցիա
Հինգշաբթի, հոկտեմբերի 22-ին
Հայոց Դրամ. Ընկ. թատերասերների խումբը
Մասնակցութեամբ դերասանների
Կը ներկայացնէ
I
ՎԵՐԱԾՆՎԱԾԸ
Դրամա 3 գործ., հեղ. Լ. Մանուէլեանի
II
ԿՐՐԹ-ԿՐՐԹ
Վօդևիլ 1 գործ., հեղ. Մալաթեանի
Ադա-Մուրադի դերը կը կատարէ պ. Սողոմոնեանը
Սկիզբն է 8 ժամին երեկոյեան:
Տեղերի գները 5-ից մինչև 50 կոպ.
Ռեժիսոր՝ ՍԵՒՈՒՄԵԱՆ
(տւ.) 1115. 1—1

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ
Հինգշաբթի, հոկտեմբերի 22-ին,
Տեղի կունենայ
ԸՆՏԱՆԵԿԱՆ ԵՐԵԿՈՅԹ
Երեկոյթին կը նուագէ լարանուագ երաժշտախումբը՝ Գիշեինի ղեկավարութեամբ:
ԱԶԴ.—Հետևեալ «Ընտանեկան Երեկոյթը» շաբաթ, հոկտեմբերի 24-ին:
(տւ.) 1117. 1—1

УЧИТЕЛЬ
С. А. ГРЯЗНОВЪ
совмѣстно съ др. опытн. преподавателями готовитъ во всѣ классы среднихъ учебныхъ завед., а также въ землемѣрн. и юнкерск. учил., учительскій институтъ, на званіе аптек. учен. и т.п. Вера, Измайловскій пер., д. № 6, кварт. 8-я (первыя ворота, 3-й этажъ).
(և. հ.) (տւ.) 1110. 2—2

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ
Ստացված են
ԱՀԱԳԻՆ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ
ՆՈՐ ՏԱՐԱԶՈՎ ԿԱՐՎԱԾ
կանանց վերարկուներ
Ծախվում են մեծ զիջումով:
Ելիզավետինսկայա փողոց, № 26:
(հ.կ.) (տւ.) 1116. 2—1

ԲԺԻՇԿ
Գ. Յ. ՄԵԼՔՈՆԵԱՆ
Ներքին և վիրաբուժական (խիրուրգ.) հիւանդութիւններ.
Ընդունելութիւնը (առաւօտեան ժ. 11—1. (երեկոյեան ժ. 5—7.
Երևանեան հրապարակ—Պուշկինսկ. փ., № 1.
(ա. օ.) (տւ.) 1045. 100—15

ԳՈՐԾԱԿԱԼԱԿԱՆ ԵՒ ԱՊՐԱՆՔՆԵՐ ՓՈԽԱԴՐՈՂ
Կ. Յ. ԱՒԱԳԵԱՆՑ ԵՒ ԸՆԿ.
գրասենեակը
սրանով յայտնում է, որ գրասենեակի նախկին ծառայողներ և վերջին երկու տարին գրասենեակին ընկեր դարձած ԱՐՏԱՇԷՍ ՂՈՒԿԱՍԵԱՆ ՄԻՒՏԱՃԵԱՆ և ԹԷՈՍ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ ՏԷՐ-ԳԷՈՐԳԵԱՆԸ հեռացել են գրասենեակի ընկերութեան գործերից, առաջինը ներկայ տարւայ սեպտեմբ. 20-ից, երկրորդը՝ հոկտեմբերի 15-ից, և այլ ևս չեն հաշւվում ընկերներ:
Այդ պատճառով խնդրվում է գրասենեակի հետ գործ ունեցողներից՝ Արտաշէս Միւտաճեանի և Թէոս Տէր-Գէորգեանի հետ չը կատարել ոչ մի առևտրական գործառնութիւն:
Սրանով ոչնչացնում եմ 1905 թւից Արտաշէս Միւտաճեանի անունով տրված հաւատարմագիրը և բոլոր այն թղթերը, որոնք զանազան ժամանակամիջոցում տուել եմ նրան: Կարապետ Յովհ. Աւագեանց
(չ. հ. կ.) 1113. 3—2

ԻՐԱՒԱՍՈՒԹԵԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐ

III

Մենք յայտնեցինք մեր տեսակէտը Թիւրքահայերի ազգային ժողովի և պատրիարքարանի լինել-չը լինելու կամ իրաւասութեան սահմանների մասին:

Մենք ասացինք, որ Թիւրքական քաղաքական իրականութեան մէջ չենք տեսնում այնպիսի պայմաններ, որոնք այնպիսի վստահութիւն ներշնչէին Թիւրքահայերի մէջ, որ հնարաւոր լինէր ջնջել ազգային ժողովի գոյութիւնը և կրճատել պատրիարքարանի իրաւասութիւնը մինչև մի զուտ կրօնական ատեանի ձեռնհասութիւն:

Ոչ, այդ չը կայ:

Թիւրքական իրականութիւնը դեռ այդպիսի վստահութեան համար հաստատուն հիմունքներ չէ ներկայացնում:

Դեռ պէտք է Թիւրքիան վաստակէ այդպիսի վստահութիւն և յետոյ հարց յարուցանէ եղած արտօնութիւնների վերացման մասին:

Այդ վստահութիւնը նա չէ վաստակել:

Եւ ով գիտէ, թէ երբ նա կարող կը լինի այդ վաստակել:

Իսկ փոխանակ այդ վստահութիւնը շահելու, նա ձեռք է զարկում այնպիսի առաջարկների և անում է այնպիսի անխոհեմ քայլեր, որոնք միայն խախտում են եղած վստահութիւնն էլ և քայքայում այն կամուրջները, որոնք պէտք է աւելի մտերիմ և սերտ յարաբերութիւնների և հաղորդակցութեան ծառայէին:

Մեր առաջ դրված հարցը ոչ միայն Թիւրքահայի, այլ և ուրիշ քրիստոնեայ ազգերի ներքական հարցերից մէկն է:

Մենք նպատակայարմար ենք գտնում առաջ բերել այստեղ նոյն հարցի առիթով մի կարծիք, որ պատկանում է «Русс. Вѣд.» լրագրի հ. Պօլսի ձեռնհաս աշխատակից Բելօրուսօվին:

Ահա ինչ է ասում Բելօրուսօվը յիշեալ լրագրի № 237-ի իր թղթակցութեան մէջ.

Թիւրք կառավարութիւնը մի շարք փորձեր է անում սեղմել սահմանադրական ազատութիւնների վայելումը և սահմանադրական սկզբունքների խեղաթիւրված մեկնութիւնով զրկել ազգութիւնները իրենց պատմական կազմակերպութիւնից…

Կառավարութիւնը հանդէս է բերել մի առաջադրութիւն, թէ սահմանադրութեան և հաւասար իրաւունքի հաստատվելով վերացվում են բոլոր հին արտօնութիւնները և նրանց թւում ազգութիւնների իրաւունքը խմբվելու իրանց հոգևոր պետի շուրջը, որը ունեցել է ոչ միայն եկեղեցական, այլ և քաղաքացիական իրաւասութիւն և եղել է իր ազգի ներկայացուցիչը Բարձրագոյն Դրան առաջ:

— Դուք ցանկանում էք—պատասխանել է տիեզերական պատրիարքը—բաժանել եկեղեցին պետութիւնից այն չափով, որքան դա վերաբերում է ազգային փոքրամասնութիւններին, թողնելով Թիւրք պետութեան մէջ կրօնապետական բնաւորութիւն: Ես այդ բանին համաձայնել չեմ կարող: Սահմանադրական իրաւական երկրում պէտք է լինի ընդհանուր իրաւունք: Ուստի՝ քանի որ փադիշահը կը մնայ նաև խալիֆ, ես էլ չեմ դադարի համարել ինձ օսմանեան յոյների ներկայացուցիչը, պաշտպանելով նրանց պետական շահերը: Իսկ եթէ կաշխարհականանայ և պետութիւնը, այն ժամանակ ես էլ կը բաւականանամ եկեղեցական իշխանութեան և շահերի շրջանով:

Եթէ Թիւրքիան ոգեւորվելով իր սկսած մաքառումով այդպիսի հակառակորդների դէմ կիրարցնէ ոյժի միջոցով հանդարտացնելու ձեւերը, այն ժամանակ սահմանադրութիւնից ոչինչ չի մնայ բացի լոկ անունից: Այն ժամանակ երկրի մէջ կը սկսվի քաօս, որի ծաւալը կը լինի մինչև այժմ տեսնվածներից ամենամեծը և Թիւրքական կայսրութեան կործանումը կը լինի մի քանի տարւայ խնդիր…

Եւ այդպէս կը շարունակվի, մինչև Արևելքի արթնացած միտքը կը հանի նրան միջնադարեան գաղափարների խորշերից և այն թիւր ու հնացած հասկացողութիւնից, թէ պետութիւնը կարող է հիմնված լինել մէկի տիրապետութեան և միւսների հպատակութեան վրա…

Մենք միայն քաղուածք արինք: Բելօրուսօվի միւս նկատողութիւնները և դատողութիւնները նոյնպէս հետաքրքրական են:

Մեզ հարկաւոր էր ցոյց տալ միայն մտածողութեան եղանակը և ազգայնական արտօնութիւնների մասին ունեցած նրա տեսակէտը:

Հեղինակը չէ պատկանում այն անձերին, որոնք վատ են տրամադրված դէպի երիտասարդ-թիւրքերը:

Ամենևին ոչ: Նա ջերմ կերպով ցանկանում է, որ ազատ սահմանադրական կարգեր հաստատվեն օսմանեան երկրում և վերջինս մանի լուսաւոր երկիրների շարքի մէջ:

Բայց այդ տեսակէտը և նրա այդ ցանկութիւնը ամենևին չեն հաշտվում Թիւրք վարչական այն ձգտումների հետ, որոնք նպատակ ունեն սեղմել ազգայնական ներկայացուցչութիւնները և խլել նրանցից այն առանձնաշնորհումները, որ նրանք վայելել են մինչև այժմ:

Այդպէս է նայում և իւրաքանչիւր մարդ, որ չէ հրապուրվում օսմանեան առատախօսում պետականութիւնից և պահանջում է իրական երաշխաւորութիւններ և անկապտելի գրաւականներ, կամ թէ կեանքի դըրական երևոյթների վրա հաստատված լիովին վստահութիւն:

Ա. Քալանթար

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՇՈՒՐՋԸ

Թաւրիզ, 20 հոկտեմբերի

Արդաբիլից եկած փախստականները յուզիչ տեղեկութիւններ են բերում քաղաքի կրիտիկական դրութեան մասին: Սպասում են, որ շահսեվանները կը վերցնեն և կը կողոպտեն Արդաբիլը: Ռուսաց փոխ-հիւպատոսարանը, որ գտնվում է Արդաբիլի բերդի կողքին, շարունակ գնդակահարվում է:

Արդաբիլին օգնելու համար Թաւրիզից ուղարկվեց 1000 պարսիկ զինուոր:

Սաթթար-խանը Արդաբիլից փախել է Սերաբ: Շահսեվանները, հալածելով Սաթթար-խանին, մօտեցել են Սերաբին և պահանջում էին իրանց յանձնել Սաթթար-խանին, սպառնալով հակառակ դէպքում քաղաքը քարուքանդ անել: Ռուսաց հիւպատոսարանի և ուսահպատակների պաշտպանութեան համար շտապով ուղարկվում են կօզակներ պօդեսաուլ Եպիֆանովու առաջնորդութեամբ: (Հ. Գ.)

Թէհրան, 20 հոկտեմբերի

Պարսկաստանի հարաւում կողոպուտները սաստկանում են: Սպահանի և Շիրազի ճանապարհը գրաւել են մի քանի հարիւր զինված աւազակներ:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀԱԼՈՑԸ

Բ.*)

1. Aucun effort, aucun sacrifce ne seront négligés pour asseoir sur des bases solides la Constitution intégrale, la fusion générale et l'action commune.

Այս յօդուածին ուշագրաւ հարցը՝ սահմանադրութիւնը ամրապինդ հաստատելու համար երկուստէք անխտիր պահանջուած ընդհանուր ձուլումն է (fusion générale):

Տարրերու միացումի միջոցները երեք են, երեքն ալ հիմնապէս տարբեր. խառնուրդ, ձուլում, բաղադրութիւն: Ո՞րն է մեզմէ պահանջուածը. ո՞րն է անհրաժեշտը:

Համանման պայմաններով կազմուած ցեղակազմ տէրութեանց վճռական ակնարկ մը բաւական է՝ խելքին չափազանց համարելու այս անմիջական միաձուլող դանդաղումը, որ բնական կերպով կը գոյանայ, առանց շտապելու:

Տարիներու լոկ աշխատութիւն է, համբերութեան խնդիր: Չշեղինք ընդհանուրին գծած շաւղէն: Ձեր և ամենուս տենչանքը՝ ներքին բարեկարգութեամբ, կատարեալ անդորրութեամբ, եւրոպական յառաջադէմ ազգաց կանոններով օժտուած տէրութեանց յատուկ է, ուր օրինաց, կարգապահութեան և արդարութեան սեղանին առջև՝ ամեն երկրորդական խնդիրներ կը փոքրկանան անկարևոր: Կայան չցատկենք:

Ծովուն մէջ վազող գետախառնուրդքին շրջակայ սահմանները իսկ չեզոք գոյութիւն մը ունին. համով, գոյնով և ձկներով տարբեր՝ մայր ծովէն և գետէն: Չեզոք, անջրպետն է, նախախնամութեան երկիրը՝ ուր օսմանցիւթիւնը չուզեր պահ մը կանգ առնել, կազդուրուիլ, կազմակերպուիլ:

Նոյնպէս է ջրաբեր եղախիւրը, ընկլուզիչ աւազը, մայր բնութեան աշխատանոցը. նա ևս չէզոք նկատուած, հաստատ հողին և անսահման ծովերու իրար դէմ անվերջ պայքարին ճակատատեղին:

Կամքը որքան զօրաւոր և աննուաճ ըլլայ, բնութեան կանոններուն կարելի չէ բռնանալ. ապա թէ ոչ՝ կը վատասերի:

Ջերոցներով ծաղկաղարմանութեան բանի արդիւնքին կը նմանի, վաղանցուկ թարմութեամբ և տոկունութեամբ, զուրկ բնութեան հաստատած եղանակին ծլած ծաղկանց բոյրէն և տեւողութենէն:

Զմոռնանք, որ բռնակալութեան հրաբուխին խառնարանը դեռ նոր գոցուած է. նոյն իսկ ստորերկրեայ խլրտումներ կը շարունակուին լսուիլ. ձեր յօդուածներն և օրուան հասած հեռագիրները ամբողջն ալ այդ վտանգը մատնանիշ կընեն: Նորակազմ կեդրը դեռ չափազանց փափուկ՝ օսմանցիութեան զանգուածին շօշափանքը վրան բեռնաւորելու համար:

Քննենք՝ զանգուածը որքա՞ն կարելիութիւն ունի այսքան շուտ գոյանալու, որքան համոզուած կը մնանք թէ սխալող անհրաժեշտութիւն մը չէ:

Բնալուծական լեզուով fusion կը նշանակէ՝ երբ երկու մարմին, իրենց յատկութիւնները չկորսնցնելով, որոշ ջերմութեան մը ներքև մէկ հալոցի մէջ կը հալին մէկ զանգուած կազմելու. այնպէս որ նոյն ջերմութեան ենթարկելով միշտ կարելի է նորակազմին բաղադրիչները իրարմէ բաժնել, որոնք այս կերպին գործողութեան ժամանակ կը շարունակեն իրենց սեփական յատկութիւնները անայլայլ պահել: Հոս կրկին նորածագ հարց կը ներկայանայ, երկուքն ալ բնական օրէնքին պատկանող: Որո՞նք են յաջող ընդհանուր ձուլումին քանակութիւնը (dose) և պայմանները (conditions): Այսինքն՝

Ա. Հայն ու Թիւրքը իրենց patrimoine (հայրենական ժառանգութիւն) կազմող հարստութենէն ո՞ր մասերը պիտի դնեն ընկերակցութեան մայր գլուխին:

Բ. Ո՞րն է եղանակը և որո՞նք են նախապատրաստական անցքերը և գործողութիւնները՝ նոյն նպատակին երկուստէք զոհաբերածները հաշտեցնելու:

Փոքր շեղում մը այս երկու հարցին լուծման կառաջնորդէ:

Ընկերութիւն մը կը ձևանայ. նախ՝ երկու դրամատէրներու միջև, հաւասար կամ ոչ կարողութեամբ և ազդեցութեամբ: Երկրորդ՝ դրամատիրոջ և արհեստաւորին միջև, առաջինը՝ իր երկիրը, դրամը ու ազդեցութիւնը, երկրորդը՝ իր գիտակցութիւնը և աշխատութիւնը կուտայ իբր contingent.

Մեր պարագան երկրորդին կը պատկանի: Աւելի ստուգելու համար համեմատական բաղդատենք հայը և Թիւրքը (որ կեդրոնացնէ ամբողջ իսլամութիւնը): Պիտի գըտնենք որ Թիւրքը՝ վեհապետէն սկսեալ, իշխանազունք, վարչապետ, պաշտօնական լեզու, կրօնք, կանոնագիրք, դրօշակ, տիրապետողի իրաւունք, ամբողջ պաշտօնէութեան դասակարգը, կուսակալ, կառավարիչ, հիւպատոս, դեսպան, ծովային և ցամաքային բանակ, ամբողջ ազգութիւն մը լրացնող կազմակերպութիւնը, որ բարեկարգ վարչութիւն մը կարող էր օսմանեան երկիրը առաջնակարգ տէրութեանց աստիճանին բարձրացնել, ուր որ էր առենօք:

Հայուն յատկացեալները խելոյն երկուքի կրնանք բաժնել.

ա. Հին կամ նոր ռէժիմի պետական վարչութեան մէջ՝ տասներկու երեսփոխան, մի քանի ծերակուտական, մինիսթր մը. տասը՝ կարևոր և 200-ի չափ երկրորդական պաշտօնեաներ. հայկական խնդիր մը, արեան հատուցումը:

բ. Պատրիարքարան մը, առանձնաշնորհում, կրօնք մը, լեզու. հին գրականութիւն, արդի օտար և ազգային գրականութիւն, տնտեսական կարողութիւն, վաճառականական վարկ և համբաւ. յարատեւութիւն և աշխատութիւն:

Ուրիշ առաւելութիւն մը չեմ նշմարեր:

Ահա paralele-ը տիրապետողին և հպատակին:

Ասոնց առաջին մասը մետաղին ստացական յատկութիւնները կը նկատուին, որոնք հալոցին մէջ պիտի ցնդին կամ ձուլուին՝ հայէն պահանջուած անխտիր զոհողութեանց և պինդ հաստատումի նպատակին:

Կը մնայ երկրորդ մասը, որ արհեստաւորին ուրոյն նկարագիրը կը կազմէ հանդէպ դրամատէրին, որ առձեռն պատրաստ ունենալով ամեն ինչ՝ ապիկար կը հանդիսանայ ի գործ դնելու՝ շահաբերելու:

Եթէ fusion générale նպատակը վերոյիշեալ հայապատկան երկու մասն ալ կը պահանջէ, որպէսզի հալոցին մէջ նետէ, այդ պարագային հայուն ստորագրած պայմանագրութիւնը marche de dupe մը պիտի կոչուի:

Զոհաբերութիւն չըսենք, այլ զոհութիւն. քանի որ բնատոհմիկ ձիրք, յատկութիւն, ազգային մարմնացում, ամբողջ էութիւնն իսկ օսմանցիութեան արևուն զոհելով, Թիւրքը կը մնայ՝ ինչ որ Համիդի օրով, նոյն ծովածաւալ ամբողջութիւնը, որ զմեզ կընդունի իբրև թէ հոսանք մը անսահմանութեան մէջ երթար խառնուէր: Այս ալ պէտք է անուանենք հայութեան ձուլումը Թիւրքութեան հալոցին մէջ՝ օսմանցիութիւնը կազմելու համար, որ է՝

Ալի վէլի, վէլի Ալի. քանզի Թիւրք կամ օսմանցի նոյն նշանակութիւնն ունին, նոյն յատկանիշները. մինչդեռ հայ և օսմանցի՝ մեր ուսումնասիրած և հաստատած պարագային մէջ՝ իրար չեն համապատասխաներ երբեք:

Արդ՝ ամբողջ աշխարհիս մէջ զմեզ զանազանող յատկանիշը մեր մայրենի լեզուն նկատուած է, հնաւանդ, որուն արմատները զէնթիկ և սանսկրիթի մէջ կը ճիւղաւորուին:

Ուստի մեզի համար լեզուն հաւասար է ազգութեան: Կը հարցնենք, հետևաբար, թէ այս ընդհանուր ձուլումի մէջ ի՞նչ կերպարանք պիտի առնէ հայ լեզուն և ի՞նչ դեր կատարէ, երբ Թիւրքերէնը պաշտօնական կը կոչուի:

Ամեն մարդ գիտէ, որ այս լեզուն՝ արաբ, պարս, օտարամուտ և սակաւաթիւ Թիւրք գաւառաբարբառէն փոխառեալ խառ-

---

*) Տես «Մշակ» № 231.

Այս օրերս կաշախինցիները (?) Դէշտիարդուէնում (?) քարուքանդ արին անգլիական հեռագրաթելը։

Հեռագրական հաղորդակցութիւնը Բուշիրի հետ ընդհատուեց մի ամբողջ օրով։ Այժմ հեռագիրը գործում է շատ վատ։ (Հ. Գ.)

—

Պետերբուրգ, 20 նոյեմբերի

Պետերբուրգի Հեռագր. Գործ. հետեւեալ տեղեկութիւնները ստացաւ իրերի այն դրութեան մասին, որ տիրում է Արդաբիլում.

Օգտուելով Պարսկաստանի իշխանութեան լիակատար անկումից և խռովութիւնից, յայտնի շահսէվանների ցեղի անհանգիստ տարրերը, որոնք թափառում են Կովկասի սահմանների մօտերը, յաճախակի յարձակումներ էին գործում վերջին ժամանակները Կովկասին մերձ գտնվող պարսկական Արդաբիլի վրա։ Ամառը նրանք մօտեցան Արդաբիլ քաղաքին և մի որոշ ժամանակ իրանց աւազակութիւններով և կողոպուտներով գլխովին կանգնեցրին ապրանքային հաղորդակցութիւնը Աստարա-Արդաբիլ-Թաւրիզի ճանապարհի վրա, որի պատճառով Աստարայի նաւահանգստում կուտակվեցին մեծ թւով ապրանքներ, որոնք գնալու էին Պարսկաստանի ներքին շուկաները։

Շնորհիւ Թաւրիզի և Արդաբիլի մեր հիւպատոսների ձեռք առած միջոցներին, օգոստոսի վերջերին աջողվեց յիշեալ ճանապարհով, ռուս կօզակների պաշտպանութեան ներքոյ, անցկացնել մի քանի կարաւաններ կուտակված ապրանքներով։

Միևնոյն ժամանակ շահսէվանները սկսեցին բարձրանալ իրանց սարերը։ Սակայն հոկտ. սկիզբներին լուրեր երևացին, իբր այդ թափառականները դարձեալ արշաւել են Արդաբիլի վրա, ըստ որում այս անգամ դաշն կապած ղարադաղցիների հետ՝ յայտնի Րահիմ խանի իշխանութեան տակ։ Այս նոր արշաւանքին տրվում էր քաղաքական բնոյթ. շահսէվանները և ղարադաղցիները հանդէս են եկել իբր թէ ի պաշտպանութիւն գահընկէց Մահմէդ-Ալի շահի և մտադիր են վերացնել պարսկական սահմանադրութիւնը։

Գեներալ-նահանգապետը Թաւրիզից Արդաբիլ ուղարկեց յայտնի Սաթթար-խանին իր ֆէդայիներով, որին միևնոյն ժամանակ յանձնարարված էր կարգ ու կանոն մտցնել Արդաբիլում և միջոցներ ձեռք առնել զսպելու տեղական ֆէդայիների կամայականութիւնը, որոնց մեծ մասը եկւորներ էին Կովկասից։ Երբ Սաթթար-խանը եկաւ յիշեալ քաղաքը, ամենից առաջ նա աշխատեց զինաթափ անել և աքսորել այդտեղից բոլոր կովկասցիներին, բայց նրա ջանքերն ապարդիւն անցան։

Այդ ժամանակները Արդաբիլին էին մօտենում շահսէվանները և ղարադաղցիները, անխնայ կողոպտելով ճանապարհին հանդիպած գիւղերը։ Սաթթար-խանի ֆէդայիների մեծ մասը հեռացաւ Սաթթար-խանից և վերադարձաւ Թաւրիզ։ Հոկտ. 12-ին Րահիմ-խանը շահսէվանների հետ միասին մօտեցաւ հէնց Արդաբիլին և կռուի ձեռնարկեց քաղաքի սակաւաթիւ պաշտպանների դէմ։ Սաթթար-խանը նահանգապետի հետ ամրացաւ բերդում, թողնելով քաղաքը բաղդի կամքին։

Վերջին տեղեկութիւնների համաձայն, Սաթթար-խանը փախել է Արդաբիլից Սերաբ, որ գտնվում է Թաւրիզի կէս ճանապարհին, ուր նա այժմ իբր շրջապատված է շահսէվաններից, որոնք յամառութեամբ պահանջում են յանձնել նրան իրանց ձեռքը։

Ի նկատի ունենալով վերոյիշեալ դէպքերը, որոնք կատարվում են վերին աստիճանի արագօրէն, պարսկական կառավարութիւնը կարգադրեց Արդաբիլ ուղարկել զօրքեր Թաւրիզից, նաև երկու հարիւրեակ կօզակ գնդակացիրներով Թէհրանից։ Սակայն, Թաւրիզի զօրամասի մեկնումը ուշացաւ անհրաժեշտ դրամական միջոցների և ռազմական մթերքների պակասութեան պատճառով, իսկ Թէհրանի զօրամասը ճանապարհի հեռաւորութեան պատճառով Արդաբիլին կը մօտենայ հաւանօրէն դեռ ոչ շուտով։ Այդ պահին Արդաբիլի ռուս հիւպատոսը, որ իր ձեռքի տակ ունէր միայն մի հարիւրեակ կօզակ և երկու գնդակացիր, չը վստահանալով ջլատել այդ փոքրիկ ոյժը՝ քաղաքային ցրված կացարանները և ռուսահպատակների գրասենեակները պաշտպանելու համար, առաջարկեց վերջիններիս ժողովվել մի տեղում հիւպատոսական պահակախմբի պաշտպանութեան ներքոյ, թողնելով տներում իրանց գոյքը, որի ապահովութեան պատասխանատուութիւնը, ինչպէս և առհասարակ ռուսահպատակների բոլոր վնասները, Թէհրանի դեսպանը դրեց պարսկական կառավարութեան վրա։ Միաժամանակ Թաւրիզի գեն.-հիւպատոսի պաշտօնակատարը տեղեկացրեց Րահիմ-խանին, որ ռուսահպատակների ապահովութեան պատասխանատուութիւնը դրվում է անձնապէս նրա վրա։

Արդաբիլի փոխ-հիւպատոսի վերոյիշեալ կարգադրութիւնը չը կարողացաւ բայց և այնպէս գործադրվել նրա համար, որ տեղական բնակիչները, երկիւղ կրելով իրանց կեանքի համար, շտապեցին թագնվել ռուսահպատակների տներում, արգելք հանդիսանալով վերջիններիս հեռանալ իրանց բնակարաններից։ Միևնոյն ժամանակ շահսէվանները և ղարադաղցիները եռանդով ռմբակոծում են բերդը, որ մօտ է մեր հիւպատոսարանին։

Իրերի այդ դրութիւնը նկատի առնելով, ինչպէս նաև մեր փոխ-հիւպատոսարանին և ռուսահպատակներին սպառնացող վտանգը, ռուսաց կառավարութիւնը միջոցներ է ձեռք առել՝ անյետաձգելիօրէն ուժեղացնելու հիւպատոսարանի պահակախումբը Արդաբիլում կովկասեան զինուորական շրջանի որևէ զօրամասից, որովհետև առաջին ժամանակ կը պահանջվի, մինչև որ ռուս զօրքերը այնտեղ գնան Թաւրիզից կամ Ղազվինից։ (Հ. Գ.)

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—

«Temps»-ի թղթակիցը Կ. Պոլսից հեռագրում է նոյեմբեր 11/24-ից. «Հայոց ազգային ընդհանուր ժողովը 40,000 ստորագրութեամբ մի ուղերձ ստացաւ, որտեղ հայ ազգը խնդրում է ազգային ժողովից եռանդուն կերպով պաշտպանել պատրիարքի պահանջները։ Այս ուղերձի ընթերցումից յետոյ մի շատ աղմկալից նիստ տեղի ունեցաւ։ Ազգային ժողովը նոր քաղաքական ժողով ընտրեց, յանձնարարելով նրան շարունակել կառավարութեան հետ բանակցութիւնները։ Ազգ. ժողովը հաւանութիւն տուեց պատրիարքի հրաժարականին։

—

Աթէնք, 20 նոյեմբերի

Պատգամաւորների պալատ։ Մինիստր-նախագահը յայտնեց, որ ապստամբութիւնը զօրքի և նաւատորմի գեղեցիկ գործողութեան շնորհիւ աջողվեց ճնշել մի քանի ժամվայ ընթացքում. այս ամբողջ ցաւալի գործը յանձնված է դատական իշխանութիւններին, որոնք չեն յապաղի ձեռնարկել քննութեան և պատժել մեղաւորներին։

Ծովային նախկին մինիստր Կունդուրիօտը առաջարկեց անյապաղ կառավարական պարգևներ նշանակել փախստական ապստամբներին գտնելու համար, նաև ապստամբների վերաբերութեամբ գործադրել ծովային և ցամաքային աւազակութիւններին վերաբերող օրէնքը, որ պահանջում է, որպէսզի աւազակների ընտանիքի բոլոր անդամները արտաքսվեն իրանց բնակութեան տեղերից»։ (Հ. Գ.)

—

Վիէննա, 20 նոյեմբերի

Ֆրանց-Յովսէփը ընդունեց չեխ մինիստրներ Ժաչէկի և Բրաֆի հրաժարականը և նրանց շնորհեց գաղտնի խորհրդականի կոչում։ Դեպարտամենտի վերատեսչին յանձնարարված է կառավարել երկրագործութեան մինիստրութիւնը։ (Հ. Գ.)

—

Փարիզ, 20 նոյեմբերի

Տարօնի ածխահանքերում, Կապօֆերի մօտերը, յանկարծակի ջրի վարարման պատճառով հանքերը ծածկվեցին ջրով։ 150 բանուորների աջողվեց ազատել։ Առ այժմ հանված են 3 դիակներ. դեռ մնում են 74 բանուորներ։ (Հ. Գ.)

—

Մադրիդ, 20 նոյեմբերի

Հիւսիս-Արևելեան Սպանիայի վրայով անցած փոթորիկը, որին հետևեց ուժեղ հեղեղ, ահագին աւերածութիւններ գործեց։ Հեղեղը տեղ-տեղ ոչնչացրել է հացահատիկները, ծածկել է երկաթուղագծերը. շատ տներ փլվելու վրա են։ Առանձնապէս վնասվեցին Կօրրունեա, Բիլբաօ, Սանտանդերա, Բարսելօնա, Րէուս, Տարրագօնա, Կաստէլիան քաղաքները և նրանց շրջակայքը։ (Հ. Գ.)

—

Պետերբուրգ, 19 նոյեմբերի

«Новое Время»-ում տպված է, որ, կովկասեան լրագիրների ասելով, ես պատրաստվում եմ հանդէս գալ մի շարք յօդուածներով թիւրքերի դէմ։ Խնդրում եմ կտրականապէս հերքել, որ այդ տեղեկութիւնը բոլորովին անհիմն է։ Պետական Դումայի անդամ Աջէմեան»։

Աջակողմեանների ֆրակցիայի գիշերային արտակարգ նիստում լսվեց ֆինլանդական գործերի մասին մի զեկուցում։ Որոշվեց անմիջապէս Ֆինլանդիա ուղարկել Դումայի 3 անդամների՝ զեկուցանողի յայտնած տեղեկութիւնները պատրաստվող զինված ապստամբութեան մասին ստուգելու համար։

Տեղս եկաւ Դումայի նախկին անդամ Լօմտատիձէի կինը, խնդրելու, որ իր ամուսնուն տեղափոխեն Սեւաստօպօլի բանտը։ Լօմտատիձէն բանտում գրել է մի քանի հէքեաթներ և մի պիէս վրացերէն և թարգմանել է Հէյնէի բանաստեղծութիւնների 5-րդ հատորը։ Բայց այդ բոլոր աշխատանքները, Լօմտատիձէի կնոջ ասելով, բանտային իշխանութիւնը խլել և ոչնչացրել է միայն նրա համար, որ նրանք գըրված են եղել վրացերէն։

Մահմէդական ֆրակցիայի պատգամ. Տուտաեվը մի շարք գանգատներ ստացաւ Ուֆայի, Օրէնբուրգի և Կազանի թուրքերից տեղական հոգևոր իշխանութիւնների դէմ, որոնք ամեն կերպ դժուարացնում են պաշտօնական ուղղափառութիւնից իրանց հին մահմէդական դաւանութեանը անցնելը։ («Б.»)

—

Աթէնք.—Թէև ծովային ապստամբութիւնը ճնշվեց, բայց և այնպէս դրութիւնը համարվում է կրիտիքական։ Հնարաւոր է հաստատվի զինուորական դիկտատուրա։ («Б.»)

—

Բերլին. — Հեռաւոր Արևելքում, տեղական լրագիրների ասածների համաձայն, պատրաստվում են կարևոր պատահարներ։ («Баку»)

—

Տաշկենտ, 20 նոյեմբերի

Սանտօյի հանքերում, Շչէլնիկօվօ կայարանի մօտ, երևաց մաքուր նաւթի ուժեղ ճիւղ 64 սաժէն խորութեամբ. նաւթի բարձրութիւնը մակերևոյթից 18 սաժէն է։ (Հ. Գ.)

ՊՈԼՍԱԿԱՆ ՆԱՄԱԿՆԵՐ

—

Կ. Պոլիս, 11 նոյեմբեր

Ազգ. երեսփոխանական ժողովը իր սպասուած, բուռն անհամբերութեամբ սպասուած նիստը գումարեց ամսուս 9-րդ օրը, կէսօրէ ետքը։ Այդ նիստը, իբրև կրքի, աղմուկի, արդէն լարուած մեքենայութեանց նիստ, կարծեմ առաջինը եղաւ իր տեսակի մէջ։ Այսուհետև ալ պիտի ունենայ իր նմանը։

Ժողովին ամբողջ նիստը գրաւուեցաւ պատրիարքին հրաժարագրի կամ, աւելի ճիշդը ըսելով, Բ. Դրան մատուցուած բողոքագրի հարցով։ Ոչ մէկ երեսփոխան տարակարծիք է այդ բողոքագրի պարունակութեանը մասին. ու ամեն հայ սրտովին բաղձացող է, որ կառավարութիւնը արդարութիւն գործ դնէ կիլիկեան աղէտքի մէջ սկզբնապատճառ չարագործներու դէմ։ Միայն թէ սա կայ, որ շատեր, պատրիարքի մեկուսացումը շարժառիթ ունենալով, իրենց յարձակումները կուղղեն վարչութեան դէմ։

Երեսփոխանութեան մէկ մասը ցարդ իր վստահութիւնը դրած է վարչութեան վրայ։

Հիմա որ ճիշդ կրիտիքական րոպէն է, միտքերը տագնապալից են ազգի ընդհանուր վիճակի մասին, կրօն. ժողովը կը հրաժարի, առարկելով թէ իր միջոցները սպառած են և գտնելով որ նոյնպէս անհրաժեշտ է վարչութեան քաղ. ժողովի հրաժարումը։

Մեր թերթերէ շատերը, կրօն. ժողովի այդ շարժումը օրինաւոր դատելով ուժ տուին այդ ուղղութեանը, և ահագին հոսանք մը գոյացաւ ժողովուրդին մէջ։ Հանրագրութիւն մը, 2500 հոգիէ ստորագրուած, ժողովքին բերուեցաւ։ Այդ հանրագրութեամբ կը պահանջուէր, որ ազգ. ժողովը ուժ տայ պատրիարքի հրաժարագրին, չթողու, որ ազգ. շահերը վտանգուին, լաւլեայն իմացնելով՝ որ երեսփոխականութիւնը հրաժարեցնէ վարչութեան քաղ. ժողովը։

Թերթերը, բացի մէկէն, ինչպէս կանխաւ գրած եմ, օր առաջ վարչութեան քաղ. ժողովի հրաժարումն անհրաժեշտ նկատած էին։

Հարցը, ժողովքին մէջ, դիտուեցաւ երկու տարբեր տեսակէտներէ։ Կրօն. ժողովի կուսակիցները կը պատճառաբանեն, թէ քանի որ վարչութեան խառն ժողովը համաձայն գտնուած է պատրիարքը հրաժարեցնելու, պայմանաւ որ՝ կառավարութենէն պէտք եղած գոհացումը չառուած ատեն՝ վարչութեան երկու ժողովներն ալ հրաժարին, կրօն. ժողովի հետ պէտք է հրաժարի վարչութեան աշխարհական ժողովն ալ։

Վարչութիւնը, միւս կողմէ, պատասխան կուտայ, որ ինքը կրօն. ժողովին համակարծիք չէ ներկայ քաղաքականութեան մէջ։ Իրաւ է թէ, երբ համոզուի, որ ալ ամեն միջոց սպառած է, ամեն դուռ փակուած է իր առջևը, ինք կը բերէ իր հրաժարականը, բայց առ այժմ՝ կառավարութեան կողմէ եկած պատասխանագիրը, թէև անբաւական, յուսահատեցուցիչ չէ։ Ահաւասիկ իր բանաձևը, որ ակէ առաջ բերուած է ազգ. ժողովի. «Ժողովը (քաղաք. ժողով) նկատելով, որ կառավարական պատասխանագիրը բաւարարութիւն չտալով հանդերձ՝ յուսալից խոստումներ կը պարունակէ, որոշեց ջանալ օգտուիլ այդ խոստումներէն, և իրերու դրութիւնն ու իր եզրակացութիւնը ներկայացնելով ընդհ. ժողովին, ենթարկել անոր հաւանութեանը»։

Իսկ կրօն. ժողովը, նոյն օրը, կըսէր իր բանաձևով.

«Ժողովը նկատելով որ պատրիարք սըրբազանի հրաժարականը իրեն նպատակ ունի, իբրև պաշտօնական բողոքագիր, արդարութեան լիովին գործադրութիւնն Ադանայի աղէտին առթիւ, և ապագային նոյնատեսակ ոճէ սպառնալիքէ և վտանգէ ապահովցման պահպանումը.

«Նկատելով որ կեդր. վարչութիւնը այս պահանջումներուն իրական գոհացում մը չըրած պահուն պարտաւոր պիտի զգայ ինքզինքն՝ հետևելու իր սրբազան նախագահի օրինական ընթացքին.

«Նկատելով որ կառավարութեան պաշտօնական պատասխանագիրն յայտնի տրամադրութիւններով այդ գոհացումը չէ տուած, իբրեւ ներկայ դրութեան մէջ հարկ կը համարինք ազգին արժանապատուութիւնն և եկեղեցւոյ նուիրական իրաւունքները պահպանելու համար՝ մեր հրաժարագիրը մատուցանել ազգ. ընդհ. ժողովոյ և անոր որոշման համակերպիլ»։

Ազգ. երեսփոխանական ժողովը, լսելով վարչութեան բերանացի լուսաբանութիւնները, չուզեց ընդունիլ կրօն. ժողովի հրաժարագիրը և որոշեց, որ ան քաղ. ժողովի հետ իր պաշտօնը շարունակէ տրուած հրահանգներու համեմատ։ Շահէն

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԷՋՄԻԱԾՆԻ ՀՈՂԵՐԻ ՈՌՈԳՄԱՆ ԽՆԴՐԻ ՇՈՒՐՋԸ

III

Դալմի առուն

1690 թւին Նահապետ կաթողիկոսը ի միջի այլ մեծագործութեանց Երևանի բերդից ներքև, Սարվանլար կոչված գիւղի մօտից, Զանգուի ձորակի լեռը ծակեց (ըստ ոմանց՝ արդէն ծակված տեղը և առուի իրաւունքը գնեց) և մեծ դրամ ծախսելով խորափոր առու բանալով Զանգուից ջուր բերեց Փարաքարի գլխով մինչև Հռիփսիմէի վանքի դէպի հիւսիս ընկած բլուրները և այնտեղ հորեր փորելով, որ «Քանքանի հորեր» են ասւում, գետնի տակով անցկացրեց այգիների և դաշտի վրա։ Այդ ջրից երկար տարիներ օգտվում էր էջմիածինը, բայց յետոյ, ներքին և արտաքին կռիւների պատճառով աչքաթող լինելով, առուն խափանվում է մինչև Գէորգ Չորրորդ կաթողիկոսի օրերը 1817 թ., երբ նա ձեռնարկում է նրա վերանորոգութեանը։ Ռուս կառավարութիւնը, հիմնվելով Զանգիբասարի գիւղերի բողոքի վրա, էջմիածնի Դալմի առուի վերաբերութեամբ իրաւանց խնդիր է յարուցանում, որը երկար ձգձգվելուց յետոյ զիջնում է վանքին Զանգուից ջուր տալ, տեսնելով որ Զանգիբասարի գիւղացիներին առուներով ջուր տալուց յետոյ՝ դարձեալ Զանգուի մէջ 22 խորանարդ ոտնաչափ մի վայրկեանում աւելորդ ջուր կայ։ Սակայն, չը նայելով որ կառավարութիւնը երկու անգամ դիմում է սինօդին, որ ինժեներ գիդրավլիկ ուղարկի վանքի համար սահմանված ջուրը առանձնացնելու, որ այլ ևս ոտնձգութիւններ չը լինեն դրսի կողմից, սինօդը, փոխանակ իսկոյն գործին ընթացք տալու, ինժեներ ուղարկելու, լռում է և նահանգապետի այդ գրութիւնները «կցում ընդ գործոյն», կամ ուրիշ խօսքով՝ խալիչի տակ դնում, կարծելով որ ջրի խնդիրը արդէն վերջացած է։ Բայց Զանգիբասարի գիւղացիները չեն լռում. նրանք շարունակում են իրանց բողոքը, և գործը ձգձգվում է մինչև 1891 թիւը, երբ սինօդը իր դիմումներին պատասխան է ստանում, որ այդ գործը յանձնված է կովկասեան ջրերի վերատեսչին տնօրինելու։ 1894 թ. հանգուցեալ Մկրտիչ կաթ. դիմում է Կովկասի կառավարչապետին և պատասխան է ստանում, որ մինչև առանձին ժողովով չորոշվեն Զանգիբասարի ջրաբաշխական շրջանի ժողովրդի ջրի վերաբերութեամբ ունեցած իրաւունքները, չէ կարող նրա խնդրին գոհացում տալ. և այդպէս գործը քնում է մինչև 1902 թւականը, երբ Յուսիկ եպիսկոպոսի (այժմ անդամ սինօդի) ձեռամբ 800 ռուբլի վարձատրութիւն է տրվում «մի վկայեալ աղբեկի իրաւագէտ անձի, որ ջրի խնդրի վերաբերեալ հարկաւոր խնդիրները գրի, հրահանգի, գործը մինչև սենատ հասցնի, եթէ պէտք լինի (միայն ինքը յանձն չէ առնում ատեան դուրս գալ), և գործը յօգուտ վանքին վճռվելուց յետոյ ստանայ այլ ևս 1600 ռուբլի»։

Սակայն այդ 800 ռուբլանոց թղթերն ու հրահանգներն էլ մնում են անգործադրելի և մթութեան մէջ, ինչպէս և վարագուրի ետևից գործող իրաւագէտի անձնաւորութիւնը...

Դալմի առուի խնդիրը, մեր կարծիքով, չը պէտք է աչքաթող անվի. նա պէտք է շարունակվի սինօդի կողմից. բայց միաժամանակ և խնդիր պիտի յարուցանել և դիմել կովկասեան ջրաբաշխական վարչութեանը՝ մինչև Զանգիբասարի գիւղերի ջրերի վրա ունեցած արտօնութիւններն և վանքին ինչ քանակի ջուր մատակարարելու որոշում կայացնելը, թոյլ տալ գոնէ Զանգուի աւելորդ ջրից օգտվել աշնանը և գարնանը, մինչև յունիս ամիսը, երբ Զանգուի ջուրը ոչ երևանցիներին է պէտք այգեկութից յետոյ և ոչ էլ չալթուկների հունձից յետոյ զանգիբասարցիներին, իսկ գարնանը մինչև յունիս ամիսը գետի ջուրն այնքան առատ է, որ նա ափերից դուրս գալով հեղեղում է ամբողջ գիւղեր, քանդում առուները և անօգուտ թափվում Երասխը։ Այդ աւելորդ ջրերից Վաղարշապատ գիւղը օգտվելով

նուրբ մըն է, սորվիլը դժուար, կարդալը դժուարագոյն, դեռ աւելի դժուար՝ սորվածդ ու գիտցածդ գրելը։

Ատենօք Թիւրք վարչապետ մը խորհած էր հայ տառերով Թիւրքի լեզուն գաւառներուն մէջ ընդհանրացնել։ Միթէ այս ալ Թիւրքին զոհողութիւններէն մին պիտի ըլլայ օսմանցիութեան բագինին։ Սակայն այս ալ անկարելի է, քանի որ Ղուրանը արաբերէն գրուած է, ինչպէս մեր Աւետարանը՝ հայերէն թարգմանուած։

Պաշտօնական լեզուն քանի որ Թիւրքերէնը որոշուեցաւ, բնականաբար մեր գաւառները ժամանակ չկորսնցնելու համար պետական դպրոցները պիտի դիմեն, որոնց վկայագիրը բանուկ անցագիր մը պիտի ըլլայ պետութեան պաշտօնատեղիներու մուտքին։ Հայը՝ մայրենի լեզուն պահպանելու համար կրկին աշխատանքի և կրկին զոհողութեան պիտի պարտաւորի, և ամեն հայ չպիտի յաջողի իր տենչանքին։ Այդպիսով՝ տակաւ՝ մայրենի լեզուն լքեալ, նուաղած պիտի մեռնի, մնալով լոկ Աւետարանը, քանի որ կրօնքնիս ալ չենք կրնար փոխել։ Պիտի առարկէք, որ ընագիրը հայերէն չէր, թէ ֆրանս., անգլ., իտալացին իրենց սաղմոսները լատիներէն կը կարդան. միթէ մեր շարականները լատիներէն կամ Թիւրքերէն պիտի հարկադրուինք երգելու։

Եւրոպացի քրիստոնեան իր մայրենի լեզուն ունի, լատիներէնի ծնունդ, ուստի հայուն ելք մը չեմ տեսներ և ոչ ալ պատրանքի լուսանցք։

Գանք պայմաններուն։ Միաձոյլ զանգուածի յաջողութեան համար՝ երկու տարրերն ալ պէտք է ունենան այն affinité-ն, այն բնական քաշողութիւնը, որով երկու մետաղ իրար մէջ կը հալին բարեկամաբար՝ հոն իսկ մէկուն կարծրութիւնը, կամ միւսին փայլն ու գոյնը գերիշխող մնալով։

Ոսկին անգամ, մետաղներու թագաւորը, զինքը գործնական ընելու օժանդակ բարեկամին կը կարօտի։

Affinité-ն բարեկամութիւնն է մետաղաց, որով նախ և առաջ երկու տարրերու մէջ այդ sine qua non պայմանը պէտք է որ գոյանայ, որու համար նորէն և միշտ նորէն հարկ է, որ մեր մշտաբաց վէրքերը դարմանելու նախ զբաղինք։

Արդարութեան հաւասարապէս կիրառումը, ցեղական խտրութեանց բարձումը, բացի կայսեր տիտղոսէն, ամեն վարչական աթոռ, պաշտօնէական դուռ ազատ մուտք պէտք է տան երկու տարրերուն ալ հաւասարապէս։ Մասնաւորապէս հայուն, քանի որ հին ռէժիմին և նոր ռէժիմին ժամանակ թիւրքին պատկանեալ կը գտնուէր։ Այս դէպքը անշուշտ թիւրքին արտասովոր կարողութեան հետևանօք չեղաւ, որովհետև ձեր լեզուին ըստ պատշաճի հմուտ չէինք։

Այս առարկութիւնն ևս այսօր կարևորութենէ զուրկ է և խոչընդոտ մը չի կրնար սեպուիլ, քանի որ հայը՝ օսմանցի ընկերութեան մէջ լոկ իբր արհեստաւոր կը մասնակցի, ճիշդ այն ձեռքի զուրկ յատկութեանց պատճառաւ կամ բերմամբ, իր տնտեսական և վաճառականական ի հնուց անտի վայելած համբաւին և գիտակցութեան շնորհիւ։

Ան պիտի դարձնէ առայժմ մեր հայրենիքին ժանգոտած մեքենան, ինչուան որ հասնիք իրեն օժանդակել, ինքն ալ ձեր լեզուին հմտանայ։

Քանզի՝ նկատողութեան առնելու է, որ ամեն հայ գեղ ու աղէկ թիւրքերէն գիտէ խօսիլ, մինչ դուք անգէտ էք մեր բարբառին։

Յօդուածին fusion gènèrale-ը արդեօք ընդգրկած է այս ամեն արդարացի խորհրդածութիւնները, որոնք օսմ. ընկերութեան յաջողութեան և յարատեւող պայմանագրութեան մը nécessaires et suffisantes conditions-ներն են։ Հակառակ պարագային ձուլումի փոխարէն՝ անկապ և անքանակ խառնուրդ մը կը ձևանայ ու կամ փոքր մասին փճացումը, այսինքն բաղադրութիւն, որ յուսանք թէ պաշտօնական ազգին ոչ հոգին և ոչ ալ մտադրութիւնը ըլլայ։

Եզրակացութիւնը ինքնաբուխ կը հոսի, թէ հայը ամեն զոհողութեան անխտիր և յօժարակամ պատրաստ է, պահելով նոր ընկերակցական անունին ներքև իր անհատականութիւնը, ազգային գոյնը, որոնց անայլայլ մնալուն նոյնիսկ մայր ընկերութիւնը ոչ մի ջանք և խնամք զլանալու է։

Այս բարեխնամ պարտականութիւնը ոչ միայն մեր լեզուին և ցեղական առանձնաշնորհումներուն նկատմամբ պէտք է գործադրուի, այլ ընդլայնի մեր աւերակաց, գերեզմանաքարերուն, որոնք իբր նուիրական հնութիւններ օսմ. պետութեան հարստութեան մաս կը կազմեն. քանի որ անոնք մեր նախահարց ձեռակերտն է, ինչպէս մեր լեզուն և կրօնքը ու օջախը անոնց մեզ աւանդած նուիրական և օրինաւոր ժառանգութիւնը։ Լ. Կ.

կալուղ էր 1000 դեսեատին տեղ: Չնչել թէ աշնանացան ցորենի և գարու համար և թէ գարնանացան գարու, թողնենք այն, որ Երևան տանող շօսէից վեր գտնված մինչև Փարաքարի սահմանները, որ այժմ անարդիւն ընկած են, գոնէ այդ մասում որևէ կանաչ կը բուսնէր և իբրև արօտատեղ կը ծառայէր, որից զուրկ են 800 տուն վաղարշապատցիք:

Այս խնդրի վրա հրաւիրում ենք սինօդի և վաղարշապատցիների ուշադրութիւնը:

Կ. Կ. Մելիք-Շահնազարեան

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Էջմիածին, 18 նոյեմբերի

Ամսիս 17-ին, Վեհ. Կաթողիկոսի անուանակոչութեան տօնի առիթով, վանքի սեղանատանը ճաշկերոյթ կար: Ճաշին հրաւիրվել էին՝ Էջմիածնի ամբողջ միաբանութիւնը, ճեմարանի ուսուցչ. խումբը, սինօդի պրօկուրօրն իր ծառայողներով, Վաղարշապատի դպրոցների ուսուցչ. խումբը և հոգաբարձութիւնը և վանքում եղող հիւրերը: Ճաշը սկսվեց ժամը 2-ին Կաթողիկոսի ներկայութեամբ: Մեսրովբ արքեպիսկոպոսը առաջարկեց խմել Վեհի կենացը. բոլոր սեղանակիցները միաբերան «կեցցէ Վեհը» գոչելով խմեցին, որից յետոյ միաբանութիւնը յոտնկայս երգեց շարական: Ապա Վեհն իր շնորհակալութիւնը յայտնելով ասաց, որ ինքը ուրախ և երջանիկ կը համարի իրան, երբ միաբանութիւնը և ժողովուրդը միացած ուժերով աջակից հանդիսանան իրան: Ապա ճեմարանի ուսուցիչ Ա. Աբրահամեանը, խմելով Էջմիածնի միաբանութեան կենացը, ցանկութիւն յայտնեց, որ միաբանութիւնը Կաթողիկոսի հետ միացած գործի յօգուտ Մայր Աթոռի շահերի: Դրանից յետոյ Վեհը հեռացաւ սեղանատնից:

Ապա Մուշի առաջնորդ՝ Ներսէս ծ. վ. Խարախանեանը խմեց ճեմարանի ուսուցիչների կենացը, ասելով որ ճեմարանը ընդհանուր հայութեան լոյսի ջահն է: Սեղանատան ընդհանուր վերահսկողի դերը կատարում էր Խորէն վ. Մուրադբէգեանը, որը, պէտք է ասած, լաւ տարաւ իր դերը:

Երեկոյեան Վանքի բակում հրավառութիւն կար:

Վեհը Սուրէնեան արքեպ.-ի անունով կոնդակ էր տուել որպէսզի միաբանական ժողով գումարի ընտրելու՝ վանք. կառավարութեան, տպարանի անդամներ, հիւրընկալ, տաճարի համար լուսարարապետ, «Արարատ» խմբագիր և այլն:

Հաւաստի աղբիւրից ինձ հաղորդում են, որ ժողովը եղել է վերին աստիճանի աղմկալից:

Ընտրվել է մի կանոնագիր մարմին հետևեալ անձերից բաղկացած.—Մատթէոս վ. 20 ձայնով, Խորէն վ. Մուրադբէգեան 20 ձ., Իսահակ վ. 18 ձ., Բաբգէն վ. 16 ձ., և Գալուստ սարկ. 16 ձ.: Այս մարմինը միաբանութեան համար կանոններ պիտի մշակէ:

«Արարատի» խմբագիր է ընտրվել Յուսիկ արքեպ.: Կարապետ ծ. վ. բողոքել է, պատճառաբանելով որ խմբագիրը պիտի լեզուներ իմանայ, որպէսզի կարողանայ օտար լեզուներով հրատարակվող լրագիրներից տեղեկութիւններ քաղել-հրատարակել, մինչդեռ Յուսիկ արքեպիսկոպոսը ոչ մի լեզու չը գիտէ, բացի հայերէնից: Կարապետ վ.-ի ձայնը խեղդվել է:

Տպարանի տեսուչ է ընտրվել Իսահակ վ., վանք. կառավարութեան նախագահ՝ Մատթէոս վ., իսկ անդամ՝ Խորէն վ. Մուրադբէգեանը: Լուսարարապետը և հիւրընկալը ձէլի նախկիններն են մնացել: Ընտրութիւնը վերին աստիճանի միակողմանի է: Ընտրվածների մէջ կան այնպիսիներ, որոնք մի քանի պաշտօն ունեն, օր. Մատթէոս, Իսահակ և Բաբգէն վարդապետները, իսկ կան և այնպիսիներ, որոնք բոլորովին պաշտօն չունեն, թէև ընդունակ մարդիկ են. օր. Գարեգին, Բենիկ և Երուանդ վարդապետները: Այս է առ այժմ ժողովի արդիւնքը:

Երեքշաբթի, ամսիս 20-ին, Գրիգոր արք. Գաղնակերեանը, Գայիանէի վանքում, Վեհափառի կոնդակի համեմատ, Մեսրովբ Տէր-Մովսիսեան և Մխիթար վարդապետներին ծայրագոյն վարդապետութեան աստիճան պիտի տայ: Իսկ եկող կիրակի եպիսկոպոսացուների ձեռնադրութիւն է լինելու. ձեռնադրվելու են՝ Մուշի առաջնորդ Ներսէս ծ. վ. Խարախանեանը, Մեսրովբ, Կարապետ և Մխիթար վարդապետները:

Չեփիւռ

Ախալցխա, 18 նոյե.

Ամսիս 16-ի երեկոյեան քաղաքիս մայր եկեղեցում կայացաւ Վեհ. Հայրապետի անուանակոչութեան հանդիսաւոր նախատօնակը: Իսկ հետևեալ օրը, 17-ի առաւօտեան, ժողովրդի խուռն բազմութիւնը և դպրոցական կազմը իրանց երկսեռ աշակերտ-աշակերտուհիներով շտապում էին եկեղեցի ներկայ լինելու հայրապետական մաղթանքին և հանդիսաւոր պատարագին, որը մատուցանելու էր ինքը փոխանորդը: Մաղթանքից առաջ հ. Սիօնը, բացատրելով ընդհ. հայրապետութեան կարևոր նշանակութիւնը, կանգ առաւ Վեհ. Հայրապետի՝ ազգին ցարդ մատուցած ծառայութիւնների վրա:

Ժամաւոր

Նիժ (Նուխու գ.), 9 նոյեմբերի

Նիժեցիք Խ. Անտոնեանցին միաձայն ընտրեցին տանուտէր տեղիս պրիստաւի և հաշտարար միջնորդի առաջարկութեամբ: Խ. Անտոնեանը մեր վիճակում անուանի և յայտնի հարուստ կալուածատէր է. նա երբէք մտքովը չէր անցկացնի երբևիցէ տանուտէր դառնալ, ինչպէս ընտրութեան ժամանակ գլխարկը վերցրած լալագին խնդրում էր թէ ժողովրդին և թէ հաշտարար միջնորդ Սօլթանօվին, որ իրան չընտրեն. բայց ժողովուրդը չը լսեց նրա խնդիրքը և իր ուզածն արեց, վստահ լինելով որ նա, պաշտօնավարութեան 3 տարվայ ընթացքում, կը տայ իր ժողովրդին այն ամենը, ինչ որ նա կորցրել է տարիների ընթացքում:

Սակայն «մի ծիծառը ծաղ չի տայ». տանուտէրին պիտի աջակցեն գիւղիս համփանները, մի կողմը դնելով իրանց նախկին երեսպաշտութիւններն ու կաշառակերութիւնները:

Հիւսիսէ

Թէոդոսիա, 13 նոյե.

Շուշու գաւառի տոհմական ազնուական Աւագ-բէգ Փրիդոնեան Բայեան Մելիք-Շահնազարեանցը, որ Վլադիկավկազումն էր հաստատել իր բնակութիւնը և 63 տարեկան էր, հայ-լուսաւորչական դաւանութեան, ամսիս 9-ի գիշերը Եալտայի և Թէոդոսիայի մէջև Ռուսական Շոգենաւային Ընկ. «Черноморъ» նաւից իրան ձգել է ծովը խեղդվելու նպատակով, սակայն շուտով ազատել են նրան և տարել հիւանդանոց: Բժշկական քննութիւնը ցոյց է տուել, որ Շահնազարեանցը այդ գործը կատարել է հոգեկան խանգարման պատճառով:

Ա. ք. Վարդանեան

Դիլիջան, 17 նոյեմբերի

Երկար ժամանակ է, մտադիր գրելու եմ մեր հասարակական կեանքը և յաճախ ականատես եմ լինում այնպիսի երևոյթների, որոնց արձանագրելը աւելորդ չէ և նոյնիսկ գաւառում ապրող ինտելիգենտի բարոյական պարտականութիւնն է:

Նախ յիշենք, որ մեզ մօտ Դիլիջանում, ինչպէս և շատ գաւառական վայրերում, համայնքը իր մեծամասնութեամբ չէ որ ընթացք ու լուծումն է տալիս այս կամ այն խնդրին, այլ մի քանի անհատներ հասարակութեան անունից տնօրինում են, իրանց ուզածին պէս, այն բոլոր խնդիրները, որոնք լուծումն են պահանջում: Ցաւալին ու աւելի հետաքրքրականն այն է, որ տարիների ու տասնեակ տարիների սոյնանման գործունէութիւնից յետոյ՝ ժողովուրդը կորցրել է իր սեփական իրաւունքի գիտակցութիւնը, և յաճախ դժուար է լինում նրան համոզել, որ նա իրաւասու է իր կեանքի հետ կապված խնդիրները տնօրինել իր անձնական մասնակցութեամբ: Սրան հակառակ, սակաւաթիւ ինքնակոչներն էլ այնքան ընտելացել են իրանց արտօնեալ դիրքին, որ, ամենօրեայ, ուրիշի իրաւունքների ոտնահարումը հասարակական գործունէութիւն ու բարեգործութիւն են յորջորջում և հաւատացնում խաբվածների ստուար մեծամասնութեանը:

Ներկայումս մեզ մօտ օրվայ հարցն է բնիկների և վերաբնակիչների փոխադարձ յարաբերութիւնների խնդիրը: Դիլիջանն ունի իր հիմնական բնակիչները և վերաբնակիչների աւելի թւով ծուխ: Այդ վերաբնակիչները տասնեակ տարիների բնակչութիւն ունեն, զբաղվում են վաճառականութեամբ և արհեստով, անհամեմատ բարեկեցիկ են տեղացիներից ու գիւղից, ունեն անշարժ կալքեր և այլն... Եթէ այսօր Դիլիջանը գիւղաքաղաքի տպաւորութիւն է թողնում անցեալի հետ համեմատած, դա միայն և միայն վերաբնակիչների շնորհիւ է: Սրանք աւելի մեծ չափերով շահագրգռված են Դիլիջանի բարգաւաճման ու առաջադիմութեան մէջ, ուստի բոլոր միջոցներով ձգտում են այդ նպատակին: Եկեղեցի, դպրոց, ակումբ, յարմար շինութիւններ, լուսաւորութիւն և նման գործեր իրանց գոյութեամբ աւելի վերաբնակիչներին են պարտական, քան թէ բնիկներին: Որպէս անհրաժեշտ եղբայրներ, վերաբնակիչները աշխատում են բարեկարգել Դիլիջանը և առանձին էլ որոշ կալուածական տուրք են տալիս համայնքին, միջին հաշւով սաժէնին 3—4 կոպ.: Այժմ մի երկու երեք կօլօմբոսներ, գտնելով որ այդ տուրքը շատ չնչին է (!), որոշել են հասցնել սաժէնին 12—16 կոպ., մի գումար, որ ոչ մի տեղ, նման դէպքերում, չէ առնվում: Նախկին 3—4 կոպէկը վերաբնակիչները վճարում էին անտրտունջ, իսկ այս վերջին կարգադրութեան առիթով բուռն բողոքներ են լսվում ամեն կողմից:

Այժմ երբ բնիկները իրանց չոր ախորժակին ցանկանում են յագուրդ տալ հարկերի յաւելումով, թէ վերաբնակիչները և թէ բնիկներից շատերը սկսել են, իրանց հերթին, հարց բարձրացնել մինչև օրս հաւաքված գումարների մասին: Բացի վերաբնակիչների անշարժ կալքերից ստացվող տուրքերը, կան և այլ մուտքեր, այն է՝ սպանդանոցից, հասարակական կլուբից, գինետներից, կառապաններից և այլն, որոնց ընդհ. գումարը, նախկինի հետ, հազարների է հասնում: Եւ իրօք, միթէ հարկաւոր չէ իմանալ, թէ ինչքան է ստացվում, ումից և ուր է գնում: Ամեն անգամ խօսողին լռեցնելու համար յիշում են, որ այդ փողերը գնում են դպրոցի օգտին: Բայց միթէ մեր դպրոցը ահագին թոշակներից զատ այդ գումարներն էլ է կլանում: Կամ գուցէ նա՝ դպրոցը փող ունի. բայց չէ՞ որ յաճախ յիշվում է նաև դպրոցի պարտքի մասին: Բայց դպրոցի մասին մանրամասն մի այլ անգամ:

Վերջացնելով ներկայ գրութիւնը, մենք, որպէս հասարակութեան անդամ, բողոքում ենք այն ինքնակոչ պարոնների դէմ, որոնք պատճառ են վերաբնակիչների դէմ եղած նոր կարգադրութեան, որ ոչ այլ ինչ է, եթէ ոչ ուրիշի հաշւին ապրելու ցանկութիւն:

Այս բոլորից յետոյ պարտք ենք համարում, նաև, յիշեցնել և նոյն պարոններին, որ բարեհաճեն մանրամասն հաշիւ տալ հասարակութեանը բոլոր մուտքերի շուրջը: Հաշիւը չը պիտի լինի ընդհանուր բառերով, թէ՝ այսքան ստացանք, այսքան ծախսեցինք, այլ մանրամասն, կոպէկ առ կոպէկ, ընկալագրերով, ումից է ստացվել, ումից ոչ, և ուր է գնացել:

Հասարակութիւնը սպասում է համբերութեամբ, ապա նա կարող է ստիպել ձեզ ճանաչել իր իրաւունքները:

Հայեան

ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

(Հեռագրով)

Պետերբուրգ, 20 նոյեմբերի

Նիստը բացեց փոխ-նախագահ Գօլուբեվը: Նոյեմբերի 9-ի օրէնքը քննելու համար 30 հոգուց բաղկացած մասնաժողովի ընտրութիւնից յետոյ, Խորհուրդը արդէն Ակիմօվի նախագահութեամբ ձեռնարկեց քննելու Դումայից ստացված օրինագծերը:

Կարսում քաղաքային ինքնավարութիւն մտցնելու, դատաւարութեան կարգը փոփոխելու և կանանց առևտրի առաջն առնելու օրինագծերը յանձնվեցին օրէնսդրական նախագծերի մասնաժողովին. 9 հոգուց բաղկացած մասնաժողովի յանձնվեց հնաաղանդներին վերաբերող օրինագիծը: Բանուորներին դժբաղդ դէպքերում ապահովելու օրինագիծը յանձնվեց յատուկ մասնաժողովի:

Մի քանի մանր օրինագծեր ընդունվելուց յետոյ, նախագահն առաջարկեց ընդհանուր ժողովին ամենահպատակ հեռագիր ուղարկել Կայսերն վաղվայ տօնի առիթով: (Հ. Գ.)

ԴԱՏԱՍՏԱՆԱԿԱՆ ԴԱՀԼԻՃԻՑ

Նոյե. 19-ին Թիֆլիսի դատաստանական պալատում ժողովրդական ներկայացուցիչների մասնակցութեամբ երրորդ անգամ քննվեց Յարութիւն քահանայ Ճուղուրեանի գործը, որ մեղադրվում էր իր վիպական գրքոյկում հակաստուածային և հակապետական մտքեր արտայայտելում: Առաջինում մեղադրւում էին քրէական օրինագրքի 49-րդ և 73-դ յօդուածների, իսկ երկրորդում 132-դ II կէտի զօրութեամբ. դատախազի և իրաւաբանի հակաճառութիւններից յետոյ, դատաստանական պալատը արդարացրեց Յարութիւն քահ. Ճուղուրեանցին, բայց վճռեց գրաքննչական կօմիտէի միջոցով գրաւված 1200 օրինակ գիրքը ոչնչացնել: Տէր հօրը պաշտպանում էր երդ.-հաւ. Տ. Յովհաննիսեանցը:

ՅՕԳՈՒՏ ԱԴԱՆԱՑԻՆԵՐԻ

Որպէս արձագանք Գր. Չալխուշեանի՝ հայ մանուկներին ուղղած կոչի, խմբագրութիւնս ստացաւ 1) Շուշուց՝ Գր. Յ. Մելքումեանից 26 կ. (տես «Մշակ» № 232, նամակ խմբագրութեան բաժինը), 2) Ջալալ-Օղլուց, տ. Հ. Սիլախտարեանից 2 ր. 6 կ., (տես «Մշակի» ներկայ համարի նամակ խմբագրութեան բաժինը):

Այդ կոչին իբր արձագանք մինչև օրս ստացել ենք 10 ր. 47 կ.:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ Երէկ, Նորին Կայսերական Մեծութիւն Նիկօլայ II կայսրի գահակալութեան օրը, Թիֆլիսի զինուորական Ալէքսանդրո-Նեվսկի տաճարում մատուցվեց պատարագ, որից յետոյ տեղի ունեցաւ գոհաբանական մաղթանք, որի ժամանակ Արսենալի լեռան վրայից պարպվեցին 21 թնդանօթներ: Պատարագին և մաղթանքին ներկայ էին Կովկասի Փոխարքայ կոմս Ի. Ի. Վօրոնցով-Դաշկօվը կոմսուհու հետ, Փոխարքայի օգնական գեներալ Շատիլօվը, զինուորական և քաղաքացիական նահանգապետները, Փոխարքայի շքախումբը, դիւանապետ Պետէրսօնը, ազնուականների պարագլուխը, գեներալիտէտը, կովկասեան զօրաբանակի Թիֆլիսի զօրամասերի բոլոր հրամանատարները, Թիֆլիսի քաղաքագլխի պաշտօնակատար Ալ. Խատիսեանը քաղաքային վարչութեան անդամների և դումայի ձայնաւորների հետ, արհեստաւորաց աւագը, մէշչանների ընկերութեան կառավարիչը և այլն: Մաղթանքից յետոյ տաճարի ընդարձակ բակում տեղի ունեցաւ զօրահանդէս: Փոխարքան իր առաջից բաց թողեց երաժշտախմբի նուագածութեամբ զօրքերին քայլերթով, որի ժամանակ եղան օվացիաներ ի պատիւ Թագաւոր Կայսրի: Նոյն օրը պատարագ և մաղթանք կատարեցին հայ հոգևորականութիւնը Վանքի ս. եկեղեցում գլուխ ունենալով առաջնորդին, միւս ազգերի հոգևորականութիւնները՝ ամեն մէկը իր աղօթատանը: Այդ օրը պարապմունքներ չը կային ոչ կրթական հաստատութիւններում և ոչ էլ կառավարական հիմնարկութիւններում: Քաղաքն առաւօտից զարդարված էր դրօշակներով, իսկ երեկոյեան լուսավորված էր:

◆ Էջմիածնից մեզ տեղեկացնում են, որ Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոսը իր անուանակոչութեան օրը ստացել է բազմաթիւ տեղերից շնորհաւորական հեռագիրներ:

◆ Նոյեմբերի 20-ին, Ալէքսանդր III կայսրի մահվան տարելիցին, կատարվեց հոգեհանգիստ Ալէքսանդրո-Նեվսկի զինուորական տաճարում Փոխարքայի և պաշտօնական անձանց ներկայութեամբ:

◆ Հանգուցեալ Շամխարեանի՝ Թիֆլիս քաղաքին կտակած կայքի մէջ, ի միջի այլոց, կայ մի քարէ տուն Աստրախան քաղաքում, որ գրաւ է դրված բանկում 30,000 րուբլով: Մի անգամ այդ տան համար նշանակվեց աճուրդ, սակայն ոչ ոք առաջ չեկաւ իբրև գնող: Այժմ Թիֆլիսի քաղ. վարչութիւնը խնդրել է Աստրախանի բանկից նշանակել երկրորդ աճուրդ, և եթէ այս անգամ էլ գնողներ չերևան, այն ժամանակ տունը վաճառել ազատ գնով:

◆ Վաղը, նոյե. 23-ին, նշանակված է Կովկասեան Կայսերական Գիւղատնտեսական Ընկերութեան անդամների ընդհանուր ժողովը:

◆ Թիֆլիսի Մետեխի բանտին կից մօտ օրերս բացվում է այբբենարանական ուսումնարան անգրագէտ հայ բանտարկեալների համար, իսկ վրայ գրվում, որ բացված է դեռ սեպտեմբեր ամսից, ներկայումս սովորում են մօտ 50 բանտարկեալներ: Զանազան անձեր նուիրատուութիւններ են անում թէ գրքերով և թէ դասական ուրիշ պիտոյքներով: («Յ.»)

◆ Ալէքսանդր Մելիք-Ազարեանը, որ վեց ամսից ի վեր բանտարկված էր, այժմ ազատ է թողնված: Երէկ Թիֆլիս ստացվեց հետևեալ հեռագիրը երդ.-հաւ. Բալ. Քալանթարեանի անունով Ռօստօվից. «Այսօր, նոյեմբերի 21-ին, այստեղի բանտից ազատ թողին Ալէքսանդր Մելիք-Ազարեանին»:

◆ Բժիշկ Տրօպինին թոյլատրված է Գուդաուտում բանալ 2-րդ կարգի մասնաւոր կրթական հաստատութիւն երկսեռ աշակերտների համար, պայմանով որ աշակերտուհիները լինեն մինչև 11 տարեկան օրիորդներ:

◆ Նորակոչ զինուորացուներ Թիֆլիսում դարձեալ ընդունվեցին 54. մինչև այժմ ընդամենը ընդունվել են 159 հոգի: Երդումը նշանակված է նոյե. 25-ին, իսկ 27-ին նորակոչները պատրաստ են ներկայանալ Թիֆլիսի զինուորական կառավարչին, որը և կորոշէ թէ ում որտեղ պէտք է ուղարկել:

◆ Ինչպէս լսել է «Зак.»-ն, գալիք տարվայ մեծ-պասին Թիֆլիս է գալու հռչակաւոր արտիստ Ֆ. Շալեապինը: Նա մի քանի ներկայացումներ է տալու Ժողովրդական Տանը:

◆ Շաբաթ, նոյե. 24-ին, Հասարակական կլուբում (Թիֆլիսի բօրսային դահլիճում) Ն. Մ. Սպիլիօտին կը կարդայ մի ռեֆերատ «Այժմեան ֆէմինիզմի ծագումը» թեմայով: Ռեֆերատից յետոյ տեղի կունենայ համերգ:

◆ Նոյե. 20-ին, երեկ. ժամը $6^{1}/_{2}$-ին, երկու շանտաժիստ-կողոպտիչներ՝ Միխօ Կօբուրիձէ և նրա ընկերը՝ մտան Կիրօչնայա փողոցում գտնվող Ցիմի դերձականոցը, և երբ դուրս եկան այնտեղից, պահնորդական բաժանմունքի պաշտօնեաները կամեցան նրանց ձերբակալել. այդ ժամանակ չարագործները նրանց վրա կրակ բացին. առաջինները պատասխանեցին և հրացանաձգութեան ժամանակ չարագործներից մինը տեղնուտեղը սպանվեց, իսկ միւսը վիրաւորվեց մահացու կերպով 5 գնդակներից. հիւանդանոց տանելիս նա էլ մեռաւ: Պահնորդական բաժանմունքի պաշտօնեաներից մինը վիրաւորվեց ձախ ոտքի փափուկ մասից: Սպանված չարագործներից մէկի մօտ գտնվեց մաուզէրի ատրճանակ 100 փամփուշտով և 182 ր. 20 կ. փող, իսկ միւսի մօտ՝ բրաունինգ ատրճանակ և 50 ր. րուբլի փող:

◆ Վաղը նշանակված է կովկասեան իրաւաբանների ընկերութեան անդամների ժողովը, ուր Մաչաբելիշվիլին կը կարդայ մի ռեֆերատ «Յանցանքը իբրև սօցիալ-ախտաբանական երևոյթ» թեմայով:

◆ Այսօր Թռչնապահական ցուցահանդէսի վերջին օրն է: Խորհուրդ կը տանք այցելել և բաւականութիւն ստանալ ցուցահանդէսում ցուցադրված իրերից: Մինչև օրս պատուաւոր դիպլօմներ, որ հաւասար է ոսկէ մեդալի, յատկացված են Ա. Սօլօվիեվին, Եա. Իսարլօվային, Կ. Հէքիմեաներին, Լ. Տրիբունսկային, Նադէլին, Գ. Վեսացէլին և Անդրօսօվին: Թռչունի փետուրներից իրեղէններ կերտելու համար արծաթէ փոքրիկ մեդալ տրված է Կ. Դունիցին: Թռչնապահութեան պարագաների համար արծաթէ մեդալներ ստացել են Ա. Դիւման և Բէլօն:

◆ Թիֆլիս քաղաքի 1910 թ. եկամուտների նախագիծն արդէն տպագրված է և յանձնված է դումայական ֆինանսական մասնաժողովի քննութեան: Շուտով պատրաստ կը լինի նաև ծախսերի նախագիծը:

◆ Թիֆլիսի ոստիկանապետն առաջարկել է պրիստաւներին միջոցներ ձեռք առնել գտնելու Էջմիածնեանսկայա փողոցում, № 39 տանը ապրող Գարեգին Արտ. Մելքումեանին, որ դուրս է եկել տնից նոյե. 14-ից և տուն չէ վերադարձել:

◆ Նոյեմբերի 7-ին Երևանի բանտում բանտարկված բանտարկեալները ներքին գործերի մինիստրի և Պետական Դումայի նախագահի անունով հեռագիրներ են ուղարկել, որոնցով նրանք գանգատվում են, որ նրանք բանտարկված են մարտի 15-ից, բայց, չը նայած որ իրանցից ուշ բանտարկվածների վերաբերութեամբ որոշումներ արդէն եղան, իրանց մասին ոչինչ չը կայ մինչև օրս:

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Կարս, 18 նոյեմբերի

Երէկ դերասան Ա. Աբրահամեանը տեղիս սիրողների աջակցութեամբ տուեց մի ներկայացում տեղիս Նորակառոյց եկեղեցու օգտին: Խաղացին «Երկու Ցիմնապետ», դրամա 3 գործող., թարգ. Դոչոյեանի: Խաղը ընդհանրապէս անցաւ թոյլ, շնորհիւ մի երկու սիրողների, որոնք դերերը բոլորովին չը գիտէին: Աջողութեամբ տարան իրանց դերերը օր. Սօլաղեանը (Լաւրետա), Աբրահամեանը (Գուլիմ), Մարաշեանը (Ռօբերտ) և Միքայէլեանը (Վայլմօրիս): Դահլիճը ծայրէ ի ծայր լիքն էր: Հասարակութիւնը հեռացաւ ոչ այնքան էլ գոհ սրտով: Զուտ արդիւնք մնաց 85 ր.:

Վ. Դաբաղեանց

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Շուշի, 16 նոյեմբերի

«Մշակի» 225-րդ համարի մէջ, Ներքին լուրերի բաժնում, հաղորդված էր, թէ Ղարաբաղի առաջնորդ Աշոտ եպիսկ. հրաժարվել է և թէ Վեհի օծման ժամանակ Շուշուց Էջմիածին գնացած պատգամաւորութիւնը ցանկութիւն է յայտնել թեմի կառավարիչ նշանակել Գարեգին վարդապետ Յովսէփեանցին:

Լինելով վերոյիշեալ պատգամաւորներից մէկը, յայտնում եմ, որ մենք Կաթողիկոսին ոչ մի ցանկութիւն չենք յայտնել ժամանակաւոր կառավարչի անձնաւորութեան նկատմամբ, թողնելով այդ հարցի վճիռը Վեհափառի բարեհաճութեանը ու ցանկանալով պահել մեզ կօրրեկտ մեր միսիայի մէջ: Եթէ մենք ցանկութիւն յայտնել ենք Գարեգին ու Բենիկ վարդապետների վերաբերեալ, այդ եղել է միայն մասնաւոր շրջանում:

Պատգամաւոր՝ Մ. Ղոնդաղսազեան

Բագու, 16 նոյեմբերի

«Մշակի» № 215-ում, գաւառական տեղեկութիւնների բաժնում, կարդացի այստեղից ուղարկված մի թղթակցութիւն, Ս. Գ. ստորագրութեամբ, որի մէջ նկարագրվում էր, թէ ինչպէս թղթակիցը հայոց գերեզմանատանը պատահել է մի քանի թուրքերի, որոնք գերեզման են փորելիս եղել, և իր հարցին թղթակիցը պատասխան է ստացել, թէ այդ գերեզմանը փորվում է Լալայեանների համար:

Այդ տեղեկութեան առիթով հարկ եմ համարում յայտնել, որ հանգուցեալ Լալայեաններին տեղափոխելու և մի նոր գերեզմանոցում ամփոփելու մասին ոչ մի կարգադրութիւն չէ եղել և անգամ հարց էլ չէ յարուցվել:

Արդէն օրէնքով արգելված է այդպիսի տեղափոխումն առանց պատշաճաւոր իշխանութեան առանձին թոյլտուութեան:

Կառավարիչ Լալայեանների
Յ. Պետրոսեանց

Յ. Գ.—Նամակս գրել էի, երբ ստացայ «Մշակի» № 224-ը, որի մէջ Ս. Գարագաշը խմբագրութեան ուղղած իր նամակում ասում է, թէ թուրք գերեզմանափորը իբր թէ խաբել է իրան՝ Ս.Գ.-ին. որովհետև ոչ թէ թուրքերի ծախսով է լինելու սպանված Լալայեանների տեղափոխումն, այլ Լալայեաններն իրանք են ծախսը անում: Միթէ բացի մի մշակ թուրքից ուրիշ ոչ մի միջոց չը գտաւ պարոնը՝ ստուգելու այդպիսի մի խոշոր դէպք, որպիսին է հանգուցեալների գերեզմանից տեղափոխումն: Նոյն

Նոր-Նախիջեան 14 նոյեմբերի

«Մշակի» № 223-ի ներքին լուրերի բաժնում հաղորդված է, թէ Կովկասի Փոխարքան թոյլատրել է Կովկասի սահմաններում խաղալ իմ մի նոր վօդվիլը 1 գործողութեամբ, «Հայկական էքսպրօպրիացիա» անունով:

Իմ վօդվիլը կոչվում է ուղղակի «Էքսպրօպրիացիա»: Նրա մէջ հայկական ոչ մի էքսպրօպրիացիա չը կայ, և ինձ համար նոյնիսկ անհասկանալի է, թէ ինչ է նշանակում հայկական էքսպրօպրիացիա: Այդ վօդվիլը նոյնիսկ այնքան միջազգային բնաւորութիւն ունի, որ գործող անձանց անունները անգամ հայկական չեն. օրինակ՝ Վիկտոր, Ժօրժ, Էմմանուէլ, Եւգինէ, Սօֆի:

Որպէսզի թիւրիմացութիւնների տեղիք չը լինի, խնդրեմ, որ աղբիւրից էլ առած լինի խմբագրութիւնդ՝ ուղղի այդ սխալը:

Ալէք. Աբէլեան

Ջալալ-Օղլի, 15 նոյե.

Ահա իմ որդի 7 տարեկան Արմենակի տպաւորութիւնները, Ադանայի 10,000 որբերի մասին: Երբ պատմում, նկարագրում էի այդ թշուառների վիճակը, ամբողջ պատմութեան ժամանակ որդիս՝ աչքերը յառած՝ ուշադրութեամբ լսում էր ինձ: Երբ պատմեցի վերջացրի նա դիմեց ինձ հետևեալ մի շարք մանկական հետաքրքիր հարցերով.

— Մայրիկ, ինչու՞ կոտորեցին այդ երեխաների ծնողներին. ինչ էին արել նրանց հայրերը և մայրերը: Նրանք շատ լաց եղան, երբ կոտորում էին նրանց ծնողներին: Մեզ նման որ տուն չունեն, շոր, ջօշիկ, ապա ո՞րտեղ են ապրում, ինչ են հագնում այդ որբերը: Մեղք չե՞ն: Իմ և Արմենուհու չափ երեխաներ էլ կա՞ն այնտեղ: Հիմա իսկ՞ հաց չունեն ուտելու:

Իր բոլոր հարցերին բաւարարութիւն

պատմելուց յետոյ՝ որդիս վերցրեց մի հացի կտոր ասելով.

— Մայրիկ, ես սա ուղարկում եմ իմ և Արմենուհու ընկերներին. նրանք կը կշտանան, էլ լաց չեն լինի։

Իմ նկատողութեանը, որ հացը քիչ է, չէ կարելի, պէտք է փող ուղարկել, այնտեղ կառնեն, նա վազեց դէպի պահարանը և այնտեղից հանեց փոքրիկ դրամարկղիկը։

— Ահա, մայրիկ, ես փող էլ ունեմ,— ասաց նա.— բայց արա տեսնեմ որքան փող կայ։ Ես բոլորը կուղարկեմ նրանց. միայն արկղիկս տուր ինձ, որպէսզի նորից հաւաքեմ և ուղարկեմ։ Այնպէս չէ՞, մայրիկ։

Թող մի որբի արցունք սրբէ իմ Արմենակիս մանկական սրտից բղխած այդ միերկու կոպէկը՝ գոնէ մէկ օրով։

Արկղից դուրս եկաւ ընդամենը 2 ր. 6 կ., որը և ուղարկում եմ խմբագրութեանդ։

Տիկ. Հ. Միրախորեանց

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԻՆՉՊԷՍ ԵՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ ՀԱԿԱՌԱԿՈՐԴՆԵՐԸ ԱՆԳԼԻԱՅՈՒՄ

Ներկայումս Անգլիան, ինչպէս գիտէ ընթերցողը, բաժանված է երկու հակառակորդ բանակի պարլամենտում քննվող և այդէն նրա հաւանութիւնը ստացած այս տարվայ արմատական բիւջէի պատճառով։

Լայն ժողովրդական - աշխատաւորական խաւերը մեծ համակրութեամբ են վերաբերվում 1909/10 թ. ֆինանսական օրինագծին, որ նշանաւոր չափով թեթեւացնում է ժողովրդի հարկային բեռը, մինչդեռ հողատէրերն ու կապիտալիստները չեն գտնում զօրաւոր խօսքեր՝ բնորոշելու ֆինանսական մինիստրի՝ Լլօյդ-Ջօրջի «սոցիալիստական» բիւջէի նախագիծը, որ դրանց ասելով նախադուռ պիտի ծառայէ անգլիական կապիտալի քայքայման, նրա՝ երկրից գաղթի. նոր բիւջէն կը կործանէ մասնաւոր հողատիրութիւնը իր բոլոր բարիքներով և այլն. ու ամեն կերպ համոզում են լորդերի պալատին կատարել մի քայլ, որի նմանը չէ տեսնված գրեթէ երկու դար,—մերժել ժողովրդական ներկայացուցիչների վերջնական հաւանութիւնն ստացած ֆինանսական օրինագիծը*)։ Կապիտալիստ - հողատէրերի՝ լորդերի պալատին առաջարկածը պիտի նկատել իբրև բացարձակ յեղափոխական ակտ, քանի որ վաղուց ընդունված ճշմարտութիւն է դառել Անգլիայում այն արդարացի համոզմունքը, թէ ժողովրդի կոպէկները ծախսելու խնդիրը տնօրինում է ստորին պալատը, ժողովրդական ներկայացուցիչները։ Բարձր պալատը (լորդերի) en bloc ընդունում է ստորին պալատի հաւանութիւնն ստացած բիւջէն «ի տեղեկութիւն», առանց մասնակի փոփոխութիւն մտցնելով նրա յօդուածների մէջ։

Մի այդպիսի տաք պայքարի ժամանակ, երբ երկու հակառակ բանակներն էլ թշնամական խօսքեր չեն գտնում իրար բնորոշելու, երբ մանաւանդ ամեն չուանքներ են թափվում «սոցիալիստական դժոխքի» ծնունդ ֆինանսների մինիստրի՝ Լլօյդ-Ջօրջի վրա, իսկ ժողովրդական խաւերը հրապարակօրէն այրում են լորդերի պալատի խրտուիլակը, ման են ածում նրան՝ դագաղի մէջ դրած, այդպիսի պարագաներում իսկ որ հետաքրքրական կը լինէր, թէ ինչպէս կը հանդիպեն իրար երկու կուսակցութիւնների պարագլուխները՝ չէզոք հողի վրա։

Այդ առիթը նորերս ներկայացաւ, երբ մի գրական հանդէսի՝ ճաշկերոյթի ժամանակ ակամայից պիտի հանդիպէին ֆինանսների մինիստր Լլօյդ-Ջօրջը և պահպանողականների պարագլուխ՝ հռչակաւոր Բալֆուրը. առաջինը իբրև տնատէր, իսկ երկրորդը՝ պատուաւոր հիւր, Ուէլսի**) գրականական ընկերութեան տարեկան ժողովում (Լլօյդ Ջօրջը Ուէլսից է)։

Հիւր Բալֆուրի կենացը առաջարկեց նրա իսկական ջերմ թշնամի Լլօյդ-Ջօրջը. «Այսօր մենք հաւաքվել ենք պատուելու ժամանակակից ամենաաչքի ընկնող գործիչներից մէկին։ Բայց ես չեմ ուզում կանգ առնել նրա գրական ծառայութեան վրա, նրա գիտութեան՝ գիտնական և գեղարուեստական ասպարէզներում։ Ես նրան աւելի լաւ եմ ճանաչում որպէս քաղաքական գործչի, համայնքների պալատի անդամի, որ արդարացի պարծենում է նրանով։ Նա և ես ոչ ամեն հարցերում և ամեն ժամանակ դաւանել ենք մի ընդհանուր համոզմունք։ Ես հաւատացած եմ, որ դա թիւրիմացութիւնից է առաջ եկել, թիւրիմացութիւն, որ վա[illegible]ամ ուշ պիտի պարզվի (ծիծաղ և ծափահարութիւններ)։ Մենք, Ուէլսում ծընվածներս, ունենք շատ պակասութիւններ, գոնէ դրա մասին ես լսում եմ ուրիշների կարծիքները (ծիծաղ), բայց յաւիտենայն դէպս մեզ չէ կարելի մեղադրել այն բանում, թէ մենք ուրանում ենք հակառակորդի արժանաւորութիւնները։ Այդ պատճառով առաջարկում եմ խմել մեր հիւրի, միստր Բալֆուրի կենացը» (ծափ.)։

Այս ճառին պահպանողականների պատուված պարագլուխը պատասխանեց նոյն բարեկամական ձևով. «Երբէք ես այնքան պատուված և շփոթված չեմ եղել, ինչպէս այսօրվայ ընդունելութեան ժամանակ։ Ես նրա մասին եմ մտածում, որ դեռ այսօր, հոկտեմբեր ամսում, մենք կռւում ենք մի խոշոր և վճռելի օրէնսդրական հարցի առթիվ՝ բիւջէի մասին, որի նախագիծը համայնքների պալատում այնքան տակտով և հմտութեամբ պաշտպանում է ֆինանսների մինիստրը։ Ես շնորհակալ եմ նրա սրտագին խօսքերի համար և կարծում եմ, որ նա չափազանցում է իմ արժանաւորութիւնները և ծառայութիւնները։ Բայց յաւիտենայն դէպս ես այն կարծիքին եմ, որ հազիւ թէ աշխարհիս մի ուրիշ երկրում նման դէպքերում արտասանվէր այդպիսի ճառ»։

Սուրբ ճշմարտութիւն է Բալֆուրի ասածը, և ռուսական իրականութիւնը դա հաստատեց հէնց այս օրերին։ Յայտնի է, որ ամսիս 13-ին Մոսկվայում մեծ շուքով տօնվեց առաջին Դումայի անզուգական նախագահ Ս. Ա. Մուրոմցեվի փաստաբանական գործունէութեան 25-ամեակը։ Իրանց «սահմանադրական» կուսակցութիւն հռչակող հոկտեմբերեանները ամենևին չը մասնակցեցին այդ յոբելեանին։ Հոկտեմբերեան «Гол. Москвы» թերթը ոչ մի յօդուած չը նուիրեց Ս. Ա. Մուրոմցեվին, նոյն իսկ չը տուեց իր ընթերցողներին տօնակատարութեան մասին որևէ հաշիւ, լուր։ Պահպանողականների ձեռքը ընկած Մոսկվայի քաղաքային վարչութիւնը նոյնպէս չը պատւեց այն մարդուն, որ երկար տարիներ աշխատել է յօգուտ քաղաքային շահերի՝ անձնական մասնակցութեամբ և իրաւաբանական խորհուրդներով։

Եւ այն նկատենք, որ բարձր կուլտուրայի երկրում գոյութիւն ունեն կուսակցական և ոչ բայթայական համոզմունքներ, որոնց յարգել պարտաւոր է ամեն մարդ։

Փորձեցէք յարգել Պուրիշկեվիչների «համոզմունքները»։ Պետ. Զաքարեան

---

*) Տես մեր յօդուածը «Անգլիական 1909—10 տարվայ պետական բիւջէն», «Մշակ» №№ 97, 98։

**) Ուէլսը, մեծ բրիտանական կղզու արևմտեան մասը, երբեմն անկախ իշխանութիւն էր։ Նրա բնիկները—հին կիմրերը—չը խառնվեցին յաղթող անգլոսաքսերի, նորմանների հետ և մինչև օրս պահպանել են իրանց լեզուն, ազգային սովորութիւնները, բնոյթը։ Միայն բարձր դասակարգն է իւրացրել անգլիական կուլտուրան և լեզուն։ Ուէլսի վերջնական նուաճումից յետոյ XIV դարում, անգլիական թագաժառանգները սանդղաբար կրում են «Ուէլսի պրինց» տիտղոսը։

Ծանօթ. Պ. Զ.

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐ. ՀԵՌ. ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

20 հոկտեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Սենատն անհետևանք թողեց Պետական Դումայի նախկին անդամներ Կուզմատովի, Պօլիկևի, Կոմեկովի, Գուդովիչի, Ստարշինովու և գիւղացի Ռոգդեվիչի վճռաջինջ բողոքագիրը, որոնց Վիլնայի դատաստ. պալատը ենթարկել էր մի տարով բանտարկութեան «Эхо» լրագրում յեղափոխական կոչեր տպելու համար։

Օրվայ ընթացքում խոլերայով հիւանդացան 10, մեռան 4 հոգի։

Սենատն անհետևանք թողեց «Наша Трибуна» լրագրի խմբագիր երդ.-հաւ. օգնական Ցիտրօնի վճռաբեկ բողոքագիրը, որին Պետերբուրգի դատ. պալատը պատժ. օրինագրքի 129-րդ յօդուածով դատապարտել է վեց ամսով բանտարկութեան։

Բազմաթիւ քաղաքներից տեղեկութիւններ ստացվեցին, որ հոգեհանգիստներ են կատարված հանգուցեալ Ալէքսանդր III կայսեր յիշատակին նրա մահվան տարելիցի առիթով։

Օրինականացվեց «Ռուսաստանում գեղարուեստը և յիշատակարանները պահող ու պաշտպանող ընկերութիւնը»։

ՆԻԺՆԻ ՆՈՎԳՈՐՈԴ։ Բացվեց հակաալկոհոլական ցուցահանդէսը։

ՕԴԵՍՍԱ։ Ի յաւերժացումն Կայսրի գալստեան, դուման որոշեց բանալ քաղաքային օրինակելի դպրոց Թագուհու անուան։

ԿԻԵՎ։ Օչերեդնի գիւղում կոմս Տիշկևի կալուածքում հրդեհից այրվեց ախոռը։ Կրակին ճարակ դարձան 108 ձի։

ԼՕՆԴՕՆ Լիվերպուլի առևտրական պալատում պրոֆ. Պէրսն առաջարկեց դպրոց հաստատել Ռուսաստանի ուսումնասիրութեան համար։ Յայտնի նաւակատոյց Ջօնը հանգանակութիւն բացեց այդ ծրագիրն իրագործելու համար. ինքը խոստացաւ ամեն տարի, երեք տարվայ ընթացքում, նուիրել 100-ական ֆունտ ստէռլինգ։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Յ. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Կուկիա, Վօրօնցօվի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
ԱՌԱՒՕՏԵՐԸ

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան և վեներական (սիֆիլիս) հ.։
Յ. Մ. ԿԷՕՆՋԵԱՆ—ատամնաբոյժ—$8^{1}/_{2}$—$11^{1}/_{2}$ ժ., պլօմբներ և արհեստական ատամներ։
Կ. Մ. ՉԻԿՕՎԱՆԻ—$9^{1}/_{2}$—11 ժ. աչքի, ներքին և նեարդային։
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.։
Ն. Տ. ՄՈՒԼԻՆ—10—12 ժ. ականջի, կոկորդի և քթի հիւ.։
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու. վեներակ., վիրաբուժութեան և միզասեռ. հ,
Ա. Մ. ՓՈՒՂԻՆՕՎ—12—1 ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկահատ.։
Ն. Վ. ԱԼԲՐԵԽՏ—$1^{1}/_{2}$ ժ. ներքին և երեխայոց հ.։
Օ. Վ. ԳԵՅԵՎՍԿԱՅԱ-ԷՆԳԷԼ—12—1 ժ. մանկաբարձ., կանանց և երեխայոց հ.։
Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—$1^{1}/_{2}$ ժ. ներքին և երեխայոց հիւ.։

ԵՐԵԿՈՆԵՐԸ

Օ. Վ. ԳԵՅԵՎՍԿԱՅԱ-ԷՆԳԷԼ—6—$6^{1}/_{2}$ ժ մանկաբարձ., կանանց և երեխայոց հ.։
Ի. Ֆ. ՄԱՐՑԻՇԵՎՍԿԻ—6—7 ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկահատ.։
Վճարը 50 կ.։ Չքաւորները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան

ԲԺՇԿԱՊԵՏ
Տ. ԳԷՈՐԳԲԷԳԵԱՆ
Աչքի հիւանդութիւններ
Ընդունելութիւնը ամեն օր
Առաւօտեան ժամը 10—1
Երեկոյեան ժամը 5—7
Վելիամինօվսկայա փող № 8
(օ. մ.) 783. 100—37

ԲԺԻՇԿ
Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆՑ
Սիֆիլիս, միզասեռական, վեներական և կաշու հիւանդութիւններ։
Ընդունելութիւնը
ամեն օր (առաւօտեան ժ. $12^{1}/_{2}$—2. (երեկոյեան ժ. 5—7.
Կիրակի օրերը միայն առ. ժ. 9—11.
Հասցէն՝ Սոլօլակ, Բէհբութեան փ., № 33.
(տ. օ.) 1044. 100—16

ԲԺՇԿԱՊԵՏ
Ա. ՔԱԹԱՆԵԱՆ
Ներքին և ջղային հիւանդութիւններ։
Ընդունելութիւնը
ամեն օր { առաւօտեան 9—12 ժ. երեկոյեան 5—7 ժ.
Միքայէլեան փողոց, № 27.
(տ. օ.) 1087. 100—8

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Յ. Դաղբաշեան

1. Ռուս-հայ լիակատար բառարան։ Գինը 8 ր., կազմով 9 ր. և աւելի՝ նայած կազմին։ Ծանապարհածախսը հեղինակի վրա։ 10 օրինակից աւելի գնողներին 20% զեղչում։
2. Հայ-ռուս լիակատար բառարան։ Բաժանորդագինը 5 ր., առաջինի բաժանորդներիս համար 4 ր.։
Բառարանիս մնացած մասը լոյս կը տեսնի մի ստուար հատորով։
3. Ռուս-հայ գրպանի բառարան։ Բաժանորդագինը 2 ր. 50 կ.։
4. Ռուսերէն այբբենարան։ Գինը 25 կ.։

Դիմել՝ Тифлисъ, Темные Ряды, Хачатуру Теръ-Хачатрянъ, կամ հեղինակին՝ С.-Петербургъ, Армянская церковь, А. Дагбашяну.
1119. 1—1

II ՄԱՍՆԱԳԻՏ. ԴԱՍԱՐԱՆ (Նախավերջին)
ՏԷՐ-ՍՏԵՓԱՆԵԱՆԻ ԱՌԵՒՏ. ՈՒՍՈՒՄՆ. ԱՍՏԻՃԱՆ. ԵՒ ԱՅԼ ԻՐԱՒՈՒՆՔՆԵՐՈՎ
բացվում է նոյեմբերի 1-ից։ Պարապմունքները ցերեկվայ ժամը $4^{1}/_{2}$-ից։ Կէս տարվայ վճարը՝ 60 ռուբ. ստացվում է սկզբից։ Ծառայողները վճարում են մաս-մաս։ Վելիկոկնեաժեսկայա փ., № 17, մուտքը Միխայլօվսկի պր., № 16—18, Վօրօնցօվի արձանի մօտ։
(օ. մ.) 1118. 5—1

—○ ԿԱՃՈՒԵՂԷՆԻ ՊԱՀԵՍՏ ○—
Եղբ. ԵԱՐՂՈՒԼԵԱՆՑՆԵՐԻ
Թիֆլիս, Միջին փողոց, № 65.
Յայտնում ենք ի գիտութիւն յարգելի վաճառականների և հասարակութեան, որ մեր պահեստում ստացված են մեծ քանակութեամբ ՌՈՒՍ-ԱՄԵՐԻԿԱԿԱՆ ՄԱՆՈՒՖԱԿՏՈՒՐԱՅԻ ԿՐԿՆԱԿՕՇԻԿՆԵՐ (галоши) և ԿՐՆԿԻ ՌԷՏԻՆՆԵՐ, զանազան տեսակ ՇԷՎՐՕՆԵՐ, ԲՕՔՍԵՐ (խրօմ) ու ամեն տեսակ ԿԱՃՈՒԵՂԷՆ ԱՊՐԱՆՔՆԵՐ—Ռուսաստանի և արտասահմանի արդիւնաբերութիւն, նոյնպէս և կօշկակարների գործիքներ ու կօշկադեղեր յայտնի ֆիրմաների։ Ինչպէս կրկնակօշիկները, նոյնպէս և բոլոր ապրանքները ծախում ենք—մեծաքանակ (оптомъ) գործարանային գներով, իսկ հատավաճառը (розничн. продажа) ամենաձեռնտու գներով։ Ունենք բաժանմունք ՎԱՐՇԱՎԱՅՈՒՄ, որտեղից նոյնպէս կարելի է ստանալ կաշուեղէն և գալանտերէյնի ապրանքներ ձեռնտու գներով։ Վարշավայի բաժ. հասցէն՝ Варшава, Лешно № 8, М. Н. Яргулову.
(կ. հ.) 938 30—12

ՄԱՒ ԿԱՐԿԱՆԴԱԿ ԵՒ ՓՈՇԻ
Փորձված իր սեփ. երեխայի վրա
„ՌՕԲՕՐԱՆ"
ԻՍԿԱԿԱՆ ՍՆՆԴԱՐԱՐ ՆԻՒԹ
«Ռօբօրան» Ա. ԴՄԻՏՐԻԵՎԱՅԻ, Թոյլատրված Պետերբ. Բժշկ. Վարչ. № 7252 գրութեամբ. Այնպիսի հիւանդութիւնների համար, որոնք առաջանում են ՆԻՀԱՐՈՒԹԻՒՆ և ՈՅԺԵՐԻ ՍՊԱՌՈՒՄՆ—արեան պակասութեան, ջղերի քայքայման, թարախաբեր պրոցէսի, ոսկրախտի, աղիքների հիւանդութեան և ԳԼԽԱՒՈՐԱԲԱՐ ԹՈՔԵՐԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԵԱՆ ժամանակ։ Վաճառվում է յայտնի դեղատներում և դեղավաճառանոց-պահեստներում։ Կարկանդակի փաթեթի գինը 75 կ., իսկ փոշինը՝ 1 ր. 50 կ.։ Մանրամասն նկարագրութիւնը—հանդերձ բժիշկների և հիւանդների գովասանական վկայութիւններով—ՁՐԻ.
Թիֆլիսի ներկայացուցիչ՝ Ն. ՀԷՔԷՔԵԱՆ. Վելիամինօվսկայա փող., № 4, «Շօկօլադ կօնդիտերսկում։ (կ. ե. հ.) 999. 0—12

Ներսիսեանաւարտ
և
ԳԻՄՆԱԶԻԱՒԱՐՏ
Երկու երիտասարդ որոնում են
ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ ՊԱՇՏՕՆ
հայոց ծխական դպրոցներում։
Տեղեկութիւնների համար դիմել «Մշակի» գրասենեակին։
(տ. օ.) 1105. 3—3

Էջմիածնեցոց ս. Գէորգ եկեղեցու ծխական Հոգաբարձութիւնը յայտնում է ի գիտութիւն, որ իր խնամքին յանձնված դպրոցի I, II և III բաժանմունքներում 2-ական ազատ տեղեր են բացվել։
Ուսման վճարը 10 ռուբլի է։
Խնդիրները կընդունվեն դպրոցում ամեն օր մինչև ամսիս վերջը։
Հոգաբարձութիւն
(կ. հ.) 1104 2—2

Լոյս տեսաւ
Մ. ՋՄՇԿԵԱՆԻ
1910 Թ. „ԾՈՅԻ" ՕՐԱՑՈՅՑԸ
յայտնի հետաքրքրական գուշակութիւններով։ Հասցէն՝ Թիֆլիս, Մակար Ջմշկեան։
(հ. կ.) 1086. 12—4

Լոյս տեսաւ եւ վաճառվում է
ՈՒՂՂԱԳՐԱԿԱՆ ԲԱՌԳԻՐՔՈՅԿ
Պարունակում է՝ 1) մօտ 10,000 բառերի ցանկ, 2) ուղղագրական կանոններ (191 երես)։ Օժանդակ ձեռնարկ հայոց լեզուի ուղղագրութեան։ Աշակերտների և ինքնուսների համար կազմեց
ԱՐՏ. ԱԲԵՂԵԱՆ
Գինն է 30 կօպ.։ Գումարով գնողներին զեղչ։ Դիմել Թիֆլիսի գրավաճառներին, կամ կազմողին—Թիֆլիս, Ներսիսեան դպրոց։ (կ. հ.) 996. 10—8

Տալիս եմ
ԱՆԳԼԻԵՐԷՆԻ ԴԱՍԵՐ
Նպաստաւոր պայմաններով։
Դիմել՝ Пассажъ Хосроева, № 11.
(ե. հ. կ.) 1109. 6—2

Վ. Փափազեանը, ունենալով ազատ ժամեր, պատրաստ է տալ ՀԱՅԵՐԷՆԻ կամ ՖՐԱՆՍԵՐԷՆԻ ԴԱՍԵՐ։ Պատրաստ է կազմել նաև խմբական զբաղումներ։ Պայմանների համար դիմել իրան՝ հարցնելով Կովկ. Հայոց Բարեգործ. Ընկ. գրասենեակում (Արաս-Արաշվ. հրապար., սեփ. տուն)։ Կարելի է գրել նաև։ Հեռախօսի համարն է 29։
(կ.հ.) 1066. 4—4

Սրանով պատիւ ունեմ յայտնելու հայ հեղինակներին, որ ՍՈՒԽՈՒՄՈՒՄ
ԲԱՑԵԼ ԵՄ ԳՐԱԽԱՆՈՒԹ
և կոմիսիայով ընդունում եմ ամեն տեսակի գրքեր, գլխաւորապէս՝ դասագրքեր։ Հաշւեյտութիւնը յունվարից յունվար։ Հասցէն՝ Сухумъ, книжный магазинъ Г. Мазлемянъ.
Յարգանօք՝ օր. Գ. Մազլմեան
(օ. մ.) 1094. 3—3

„ՊՐՕՎՕԴՆԻԿ"
ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
~ ՌԻԳԱՅՈՒՄ ~
1897 թ.
ФАБРИЧ. КЛЕЙМО ПРОВОДНИКЪ РИГА
1888
Անդրկովկասեան ֆաբրիկային պահեստ Թիֆլիսում
ՍՕԼՕԼԱԿՍԿԱՅԱ ՓՈՂ., № 4
ԱՌԱՋԱՐԿՈՒՄ Է ՄԵԾԱՔԱՆԱԿ ԵՒ ՀԱՏՈՎ
ԼԻՆՕԼԷՈՒՄ մեծ քանակով, միագոյն և նկարներով.
ԱՍԲԷՍՏԻ ԿԱՐՏՕՆ.
ԱՍԲԷՍՏԻ ԵՒ ՏԱԼԿԻ ՆԱՒՇԵՐ.
ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ
„ՅԱՒԻՏԵՆԱԿԱՆ" ԼԻՆՕԼԷՈՒՄ միջանցիկ նկարներով, որոնք չեն ձևափոխվում մինչև լինոլէումի վերջնական մաշվելը։
ԼԻՆԿՐՈՒՍՏԱ № 1 (յաւիտենական պաստառներ) բէլիէֆ նկարներով զարմանալի իրանց չքեղութեամբ և մեծ խնայողութեամբ։
1034. 0—1

Электропечатня Ав. Мугдусіакопова съ С-ми. Большая Ванкская № 3